


1662-1668

17 1234

4-64



ՈՒՍՈՒՄՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆԻ

ՅՕՐԻՆԵԱՅ

ԵԼԻԵԷ Ծ. ՎԱՐԴ. ԱՅՎԱԶԵԱՆ

کتابخانه و چاپخانه کیلیدجیان
در سعادت پالی قیصر

ՈՒՍՈՒՄՆ ՏԱՐԲՈՒԿԱՆ

Հ. ԿԻԼԻԺԻԱՆ
LIBRAIRE-ÉDITEUR
CONSTANTINOPLE



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՆՏԱՏԼԵԱՆ

(Արամեան)

1886

9066-24

6467-87

Ման. — Աստղանիշ* ունեցող բառերը բացատրուած են
գրքիս վերջը գրուած մասնաւոր բառացուցակով :

ԻՐԱՆՈՒՆԻՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ Է ՀԵՂԻՆԱԿԻՆ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



ԲՍՐՈՅՍԱԿԱՆԻ սոյն համես դասագիրքն յօրինելով, մեր նպատակն եղած է հայ մանկւոյն ծանօթացունել անհասական եւ ընկերական կենաց պարտաւորութիւններ, եւ նոցա մասաղ սիրտնու մէջ արմատացունել պարկեցութեան եւ անձնութեան ազնիւ զգացումներ :

Մանուկն իմացական դաստիարակութեան հաւասար, պէտք ունի բարոյական դաստիարակութեան. բաւական չէ մշակել նորա *միտքն*, հարկ է մանաւանդ զօրացունել նորա *կամքն*, սիրելու համար որ ինչ իւր պարտքն է, որ ինչ բարի եւ արդար է : Բարոյական գերազանցութիւնն անհրաժեշտ սարերքն է մարդկային ամեն մեծութեան. կարէ ոք հանճարեղ եւ գիտուն լինել, բայց եթէ զուրկ է առաքինութենէ, ոչ միայն կը նուազի իւր արժէքն, այլ յանախ եւս անօգուտ կը լինի իւր ազգին ու մարդկութեան վնասակար :

Թուլաբարոյ եւ անձնատէր անհասներէ երբէք կարելի չէ կազմել ընկերութիւն մի կորովի եւ անձնուէր. բարուց անկումն առաջին աներկբայելի նշանն է ազգաց կործանման. պատմութիւնը

կ'ապացուցանէ զայս : Ստոյգ է ուրեմն , թէ ժողովրդոց գոյութիւնն ու բարեբասութիւն կախումն ունի ոչ այնչափ արտաքին ազդեցութիւններէ , որչափ նոցա ներքին բարոյական զօրութենէն . մոլութիւնք սովորութեանց եւ սգիտութիւնք պարտուց կը գործեն աւելի մեծ նախնիր , քան արտաքին ամեն բռնաւորութիւնք եւ աղէտք :

Մեր դարն , ինչպէս ամեն դար , ունի իւր մասնաւոր հաւմութիւն . պարտուց ոգին ընդհանրապէս կը բուռի տեղի տալ շահու անձուկ ոգւոյն , եւ բարոյական զգացման կը յաղթանակէ զգացումն նիւթական հանոյից : Ընկերական բարուց սոյն հակամիտութիւն կարէ նուազ ներգործութիւն ունենալ մի տարբեր ժողովուրդի վրայ , այլ մեզ համար նշմարիտ վտանգ մի է պնդութեամբ , զոր պարտիմք նախաստեղ եւ բոյլչտալ , որ մեր ազգային կեանքն հիմնովին տապալի :

Բարեբեւն դաստիարակութենէ կը ծնանին . դաստիարակութիւն միայն զայնս կ'ստեղծէ եւ կ'ազնուացունէ , ուսուցանելով պարտուց կանոնն ու գործնականն : Մանկութիւնը խարխիսն է , որոյ վրայ պիտի կազմուի ողջոյն ընկերային հաստատութիւնն . դաստիարակել զմանուկն , բարեբեւել է սերնդեան բարքն ու ապագայն :

Սոյն նպատակաւ ի լոյս կ'ընծայեմք զայս համառօտ ՌԻՍՈՒՄՆ ԲԱՐՅԱԿԱՆԻ , զոր պատրաստելու համար ոչ նուազ նպատակ է մեզ Լէօթօյժ Մա-

պիլիօ գաղղիացւոյն « Բարոյակսնն » :

Նախնական կրթութեան յասկացեալ սոյն գործն բոլորովին նոր է իւր ռնովն ու մեքոսով . իւր դասերն յոյժ պարզ են եւ դիւրին , ինչպէս կը պահանջէ մանկան մտաւոր կարողութեան աստիճանն . եւ ճրչափ նուազ տեսական , նոյնչափ աւելի կը պարունակէ գործնական խրատներ ու օրինակներ :

Տեսական պատուէրք կը ներգործեն մտաց վրայ դասողութեամբ , իսկ գործնական օրինակներ կ'ազդեն արտի վրայ զգացմամբ . օրինակք ապացոյցներ են սկզբանց եւ կը յայտնեն նոցա արժէքն ու արդիւնք : Գասողութիւնն՝ կարէ համոզել , բայց օրինակն կը գրաւէ եւ կը յափշտակէ . կը զարմացունէ կատարուած իրողութեանց վրայ , եւ կու տայ ուժգին փափաք նմանող լինելու այն անձանց եւ գործոց՝ որք մանկան համակրութիւնը կը յուզեն :


Բայց բարոյականի դասագիրք մի ճրճան խնամով եւ յօրինուի , միտք բաւական գործ կը մնայ դարձեալ ուսուցչին նախարարութեան , որ պարտի օգուտ քաղել ամեն առիթէ , եւ իւր կողմանէ եւս յաւելուլ դասին յարմար օգտակար ու զուարնալի բարոյական մանրավէպեր , զարբուցանելով հետաքրքրութիւն , բայց թոյլ տալով , զի մանկան միտքն բացուի իւր յատուկ ջանքերով , եւ յորդորուի ինքնին մեկնելու իւր ուսանելիք առարկայներն :

Գասագրոյս կիրառութեան համար խօսելով, ուսուցիչն առակերտաց ընթերցման նիւթ պիտի ընծայէ իւրաքանչիւր *Պօսակցութիւնն* . պիտի տայ ի բերան ուսանել *Համառօտութիւնն* . իսկ *Հրահանգ* ներու գործածութիւնն կախումն ունի ուսանողաց զարգացման վիճակէն :

Կը յուսամք, թէ եօթնէն մինչեւ տասն տարեկան եղող ամեն երկսեռ մանուկներ՝ առանց բնաւ դժուարութեան՝ կարող պիտի լինին հետեւելու սոյն գործնական Բարոյականի Ուսման, զոր, յանուն Վասպուրական աշխարհի Վանայ ազնուագարմ հայ մանկսէլոյն, կը նուիրեմք բոլոր ազգին զաւակաց :

1886. Հոկտեմբեր

Գասը-գիւղ



ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ուսումն Տարրական

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Գ Լ Ո Ի Խ Ա. — Ը Ն Տ Ա Ն Ի Ք

1° ՀԱՅՐ ԵՒ ՄԱՅՐ

— Ո՞ւր է Արմենակ. բացակայ կը տեսնեմ զինքն այս առաւօտ, հարցուց դասատուն իւր կարգի աշակերտաց:

— Երէկ երեկոյ իւր մայրը մեռաւ, տէր, և իւր հօրն հետ խոր սուգի մէջ է. երբ վարժարան կու գայի, նոցա տունը մտայ և տեսայ, զի երկուքն ալ շատ կու լային:

— Ո՛հ, խեղճ տղայ, որչափ կը ցաւիմ իւր վրայ. մայր մի կորուսանե՛լ կեանքի մէջ ամենէն մեծ թշուառութիւնն է:

— Ո՛րչափ ալ կը սիրէր իւր մայրն:

— Բայց այդ մեծ բան մի չէ. որչափ

սիրեմք մեր ծնողքն, տակաւին չեմք կարող նոցա սիրոյն փոխարէնն հասուցանել: Մանաւանդ մայրերն այնպիսի դարձումնօք կը սիրեն իւրեանց զաւակներ, որոյ նման անկեղծ սէր չ'կայ բնաւ աշխարհի մէջ. թերեւս պատճառն այն է, որ կանայք բոլորովին ընտանեաց մէջ կ'ապրին և իւրեանց սիրան աւելի ուժղին կը սիրէ զայնս որ մասն են ընտանեաց:

Անտարակոյս կանայք կարող են սիրել արդարութիւն և հայրենիք. բայց նոցա զաւակն ամեն բանէ առաջ է միշտ. Հռովմայեցւոց պատմութեան մէջ կը կարդամք. Ովրաախօս անունով ծերունի մի իւր երեք որդիներն յղած էր թշնամեաց դէմ պատերազմիլ մենամարտութեամբ*, որմէ կախում ունէր Հռովմի* բախտն. ծերունին լուր առնլով, թէ երեքէն երկուքն մեռած են, և երրորդը, միայնակ մնալով երեք թըշնամեաց դէմ, կը փախչի իւր կեանքն ազատելու համար, կ'սկսի նախատել զայն: Մերունոյն մօտ եղողներ կ'ըսեն. « Ի՞նչ կ'ուղէիք որ դորձէր երեքի դէմ ». « Թող մեռնէր », կը պատասխանէ քաջ ծերուկն:

Այսպիսի պատասխան մի անշուշտ վսեմ է, բայց մայր մի այսպէս չէր կարող պատասխանել, զի որչափ դեռ կ'ապրի իւր որդին, նորա սէրն ամեն բանէ վեր է իւր սրտի մէջ:

Այսպէս նաեւ Հռովմայեցւոց մէջ կը տեսնեմք հայր մի որ կը զօհէ ընտանեաց սէրն արդարութեան պարտուց համար. Բրուտոս* Հռովմայ հիւպատոս* էր, տեղեկացաւ թէ իւր որդին դաւ* կը նիւթէր Հասարակապետութեան* դէմ, մահուան դատաստարտեց զայն եւ գործադրեց նոյն իսկ իւր աչքին առջև: Սակայն մայր մի չէր կարող երբէք ունենալ այսպիսի սուկալի քաջասրտութիւն:

Ընտանեաց մէջ, մայրն կ'ազդէ քաղցրութիւն և գուր, իսկ հայրն կը ներշնչէ արիութիւն և պարսուց զգացում: Կը տեսնէք ուրեմն, թէ երկուքն ի միասին պէտք է կրթեն իւրեանց մանկիկն, վասն զի մին միւսին պակասը կը լրացունէ: Երանի այն սրբւոց, որ իւրեանց մատաղ հասակին մէջ սոյն երկու ամենատիրելի առաջնորդներուն խնամքը կը վայելեն:

2° ՍԷՐ ՈՐԴԻԱԿԱՆ

Օ — Որդիք պարտին ուրեմն սիրել իւրեանց ծնողք. այս է մարդկային զգացմանց մէջ ամենէն առաջին, բնական և խորին զգացումն:

Այն անձն որ սոյն բնական օրէնքին դէմ կը մեղանչէ, անասուններէն անգամ ստորին է, վասն զի նոքա ևս սէր կ'զգան իւրեանց ծննդեան պատճառ եղող էակաց վրայ: Մարդ որչափ իւր սրտի մէջ որդիական սէր ունենայ, միշտ յուսալի է թէ իւր յուրեղոյն* վարուց մէջ անգամ կարէ ուղղուիլ: Ոճրագործներ, որք սպանութիւն և գողութիւն գործած էին առանց սոսկալու, իւրեանց ծնողաց անունը լսելով, արտասուած, և իւրեանց գործած չարիքին վրայ մեծ զղջում ցոյց տուած են:

Այսպէս ուրեմն, տղայք, մի մոռնաք բնաւ, թէ բոլոր պարտուց մէջ ամենէն սուրբն է սիրել իւր հայրն ու մայր, ուրախանալ երբ նոքա երջանիկ են, վշտանալ երբ նոքա կը վշտանան, և արտասուել բոլոր սրտով նոցա անդարմանելի կորստեան վրայ:

3° ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

— Տեսնեմք, Ա՛րամ, կրկնեց դաստիարակն, ի՛նչու այսպէս կը սիրեմք մեր ծնողներ :

— Վասն զի նոցա կը պարտիմք մեր կեանքն :

— Լաւ, բայց նոքա միայն կեանք տուած են մեզ :

— Ո՛չ, տէր, այլ նաեւ զմեզ կը սնուցանեն, կը հագուեցունեն, կը մեծցունեն . . .

— Սւեւցուր նաեւ թէ զմեզ դպրոց կը խրկեն եւ կը կրթեն, վասն զի հասկցած են թէ շատ օգտակար է խելացի և բարեկիրթ լինել :

Ծնողք տակաւին ուրիշ ի՛նչ խնամք կը տանին մեզ համար :

— Ո՛հ, այո, տէր, երբ մենք հիւանդ լինիմք, նոքա զմեզ կը խնամեն, և մեր վրայ դիշեր ցերեկ կը հսկեն, մինչեւ իսկ շատ անգամ մեզ համար կը հիւանդանան : Անցեալ տարի, երբ Ս. րմենակ տեհուլ* կը տառապէր, իւր մայրն ութ օր եւ ութ դիշեր

հսկեր է իւր վրայ, առանց բնաւ ննջելու :
— Կը տեսնե՞ս ուրեմն, զի Ս. Բամենակ ի-
լաւամբ կ'արտասուէ այսօր : Եթէ անտար-
բերութիւն յոյց տար իւր մօր կորստեան
վրայ, շատ անարժան գործ մի գործած
պիտի լինէր :

Սպերտխառ տղայք վատ մարդ կը լինին .
ինչ կարելի է յուսալ այն զաւկէն որ կը
մոռնայ իւր ծնողք : Ընդհակառակն բոլոր
մեծ մարդիկ նշանաւոր եղած են իւրեանց
որդիական սիրով և երախտագիտութեամբ :

4° Մ Ե Ծ Ա Ր Ա Ն Ք

— Տէ՛ր, հայրս անցեալ օր կը պատմէր,
թէ իւր հին ընկերներէն մին, որ քսան տա-
րի առաջ հողագործ էր, Պօլիս* երթալով,
պանդոկապետութեամբ բաւական դումար
չահեցաւ : Իւր ծնողք մնացին հայրենիք,
ուր սակաւ ինչ դրամ կը խրկէր նոցա մէկ
երկու տարին մի անգամ . և երբ երկիր
վերադարձաւ, սկսաւ արհամարհանօք վար-
ուիլ իւր ծնողաց հետ, որովհետեւ աղքատ
են նորա, մինչդեռ ինքն հարուստ է . հրա-

մայելով կը խօսի նոցա, և իւր այս ընթացք մեծ վիշտ կը պատճառէ նոցա սրտին:

— Այդ մարդ յիմար մ'է և գէշ սիրտ ունի, բարեկամ: Պէտք է միշտ մեծարել իւր ծնողքն, ինչ որ լինի նոցա տարիք, վիճակն ու կրթութիւն: Մեր ծնողք միշտ մենէ վեր են: Եթէ պակասութիւն ևս ունենան, զաւկին չ'վերաբերիր դիտողութիւն ընել: Յիշեցէք Նոյի* պատմութիւնն. որ մի երբ անզգուշութեամբ արբած էր, իւր տղայք տեսան զինքն, և մեծարանօք մօտենալով, նորա մերկութիւնը վերարկուով ծածկեցին: Անոնցմէ մին, Քամ, ծիծաղեցաւ իւր հօր վրայ, և երկրորդ օրն իւր հայր արտաքսեց զինքն, և այնուհետեւ անիծեալ ու թշուառ ապրեցաւ:

5⁰ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ . — ՀԱՅՐԱԿԱՆ ԻՇ-

ԽԱՆՈՒԹԻՒՆ

— Տէր, Արմենակ տասներեք տարեկան է տակաւին, բայց իւր հայր չ'ուզեր զինքն

այլ ևս դպրոց խրկել, մինչդեռ Արմենակ մեծ փափաք ունի: Լաւ չէ՞ր միթէ, զի առանց իւր հօր խօսքին ականջ դնելու, շարունակէր դպրոցական ուսմունքն:

— Ո՛չ երբեք, սիրելիս. և թէպէտ ես ալ կը փափաքիմ վերստին տեսնել զԱրմենակ, սակայն խորհուրդ պիտի տայի նմա, որ իւր հօրն անսայ*. պէտք է մեծարեմք մեր ծնողքն, հնազանդութիւն յայտնելով հանդերձ: Նոքա կարեն մեզ հրամայել, ինչ որ լաւ ու օգտակար դատեն, և բնաւ նուաստութիւն չէ անսալ իւր ծնողաց և հետեւիլ նոցա խրատներուն, կատարելով նոցա հրամաններ: Նոցա ջանքովն եղած եմք, ինչ որ եմք. բան զմեզ աւելի փորձառու են նոքա և բան զմեզ լաւ գիտեն ապրելու եղանակն: Այս ամեն բան իրաւունք կուտայ ծնողաց մեզ հրամայելու, և պատժելու, երբ չարութիւն գործեմք:

— Բայց, տէր, եթէ նոյն իսկ ծնողք վատ բան մի հրամայեն, կամ եթէ իւրեանց իշխանութիւն գործածեն չարչարելու համար իւրեանց որդիքն, այն ժամանակ դարձեալ պէտք է հնազանդիլ նոցա:

— Ա՛հ, այդ տարբեր բան է. բայց ծնողաց անիրաւութիւնն պէտք է շատ բացայայտ լինի, որպէս զի զաւակն իրաւունք ունենայ մինչեւ իսկ ծնողաց հրամանն չկատարելու: Ստոյգ է թէ երբ ծնողք ստիպեն իւրեանց որդին գողութիւն ընել, սուտ խօսիլ, յայնժամ որդին պարտաւորեալ է մերժել: Բայց այսպիսի բան զրեթէ երբէք չ'պատահիր. ամենէն յանցաւոր ծնողք անգամ կը ջանան, զի իւրեանց գործած յանցանքն իւրեանց որդին ալ չ'գործէ: Դարձեալ, եթէ հայր մի անիրաւ տեղ իւր որդին չարչարէ, սակարող է բողոքել Թաղական* Խորհուրդին, որ կը պաշտպանէ տկարներն ու հարստահարեալներ*:

— Սակայն հին ժամանակ կարծեմ շատ տարբեր էր, կրկնեց Տիգրան. դուք մեզ պատմեցիք, թէ Յունաց* և Հռովմայեցւոց մէջ հայրը բացարձակ տէր էր իւր զաւակն անձին և կեանքին:

— Այո՛, բարեկամք, հայրական իբխանութիւնը չափ չունէր այն ժամանակ: Որչափ հայրն ապրէր, զաւակներն իւր հրամանին տակ էին, և հայրն ազատ էր, ինչ-

պէս ուզէր, այնպէս վարուիլ նոցա հետ :
Հին Յունաստանի Սպարտա* քաղաքին մէջ,
հայրերն իրաւունք ունէին մեռցնել կամ
ւրբանել* այն խեղ* ու տգեղ զաւակներ,
զորս կը կարծէին թէ անկարող են
օգտակար լինիլ իւրեանց ընտանեաց և
հայրենեաց :

Քրիստոնէական կրօնը մարդոց այս վայ-
րենի բարքերն ամոքեց* . պատուիրեց որ
ընտանեաց բոլոր անդամք սիրեն զիրար . և
թէպէտ հակառակ կրօնի այս գեղեցիկ
պատուէրին, տակաւին կը գտնուին ան-
գութ հայրեր որ չարաչար կը գործածեն
իւրեանց հայրենական իշխանութիւն, բայց
այսօր ազգը չ'թողուր որ զաւակները բոլո-
րովին ճնշուին . ժողովուրդը կ'արհամարհէ
այնպիսի հայրեր, և կառավարութիւնը կը
պատժէ : Այժմ զաւակն, երբ չափահաս
ու խելահաս լինի, անկախութիւն կ'ստա-
նայ, բայց միշտ պարտաւորեալ է իւր ծնող-
քն յարգել ու մեծարել, և նոցա բարի
խորհուրդները չ'արհամարհել :

6° ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

— Սակայն, տէր, յարեց* խորէն, որչափ ազատ ու անկախ լինիմք մեր չափահասութեան ժամանակ, պարտիմք օգնել մեր ծնողաց, այնպէս չէ: Գիւղերու մէջ աղքատ մարդեր կան, ծեր ու անկարող, իւրեանց որդին որ Պօլիս գնացած է, կը զլանայ* օգնել նոցա աղքատ վիճակին մէջ, և երբ զինքն յանդիմանեն, կը պատասխանէ թէ պարտաւոր չէ նոցա խնամք տանելու:

— Այդ անձը կը մեղանչէ. օրէնքն պարտք կը դնէ սրբւոյն՝ օգնել իւր ծնողաց, երբ միջոց ունի: Բայց ազգային օրէնքներէ վեր, կայ նաեւ ուրիշ աւելի հաստատուն և աւելի մեծ օրէնք մի, որ թէպէտ թուղթի վրայ չէ գրուած, բայց անջնջելի դրոշմուած է մեր սրտի խորն, եւ կ'ստիպէ զմեզ օգնել մեր աղքատ ու անկար ծնողաց. և այս օրէնքն է՝ մեր խելճն: Պարտքեր կան, տղայք, զոր կարելի չէ օրինագրութեան մէջ գրել, բայց ամեն սիրտ ունեցող մարդ ընականաբար կ'զգայ: Այս

պարտաւորութեանց մէջ առաջինն է պաշտպանել եւ նեցուկ* լինել իւր ծնողաց, երբ նորա պէտք ունենան :

Հին պատմութիւն մի կայ, թէ Կրեստս* թագաւորին որդին, 'ի ծնէ համար, մի օր՝ պատերազմի մէջ՝ տեսնելով որ զինուոր մի իւր հայրն պիտի սպաննէր, խկոյն զինուորին առջեւ վազեց, և յուզմունքէն լեզուն բացուելով, աղաղակեց. «Զօրական, մի սպաններ զԿրեստս» : Որդիական սէրն լեզու տուած էր նմա :

Պատմութիւնն լի է այսպիսի օրիակներով, որոց մէջ կը տեսնեմք պատանիներ որ իւրեանց կեանքն կը զոհեն փրկելու համար իւրեանց հայրն, օրիորդներ սր անձնուէր կը լինին իւրեանց մօր երջանկութեան համար. և պէտք չէ զարմանալ նոցա վրայ. զաւակաց սոյն անձնազոհութիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ փոքրիկ հատուցում մի այն բարիքներուն, զոր այնչափ առատօրէն վայելեցին իւրեանց ծնողքէն. երախտագիտութիւն և սէր պարտք կը դնեն որդւոց վրայ անձնուիրութիւն ցոյց տալ առ ծնողս :

7° ԱԶԳԱԿԱՆՔ

— Արմենակ այնչափ թշուառ չէ տակաւին, տէր, ըսաւ Սրամ, իւր աչաց արցունքները զսպելով. նա տակաւին հայր մի ունի, իսկ ես ոչ ոք, բայց 'ի եղբօրէս :

— Ստոյգ է, սիրելի որդեակ. բայց քո եղբայր այժմ չափահաս և կատարեալ մարդ եղած է, և քեզ համար ճշմարիտ հայր մ'է. դու զայն կը սիրես անկեղծ զգացումներով, ինչպէս ապահով եմ :

Ամեն եղբայր և քոյր պէտք է փոխադարձ սէր և անձնուիրութիւն ցոյց տան. բայց այս հերիք չէ. անդրանիկները պարտին օգնութիւն և պաշտպանութիւն ընծայել միւսներուն, մանաւանդ երբ ծնողքի պաշտօն կը կատարեն : Ի փոխարէն կրտսերներն կը պարտին անդրանիկներուն նոյն երախտագիտութիւն, նոյն մեծարանք և նոյն հնազանդութիւն, զոր կ'զգային իւրեանց հօր և մօր համար :

— Ճշմարիտ է արդեօք, տէր, յարեց Նորայր, թէ երբեմն անդրանիկ որդին կը

Ժառանգէր իւր հօր բոլոր ստացուածքն,
ու միւսներ բոլորովին կը զրկուէին:

— Այ՛ո՛, բարեկամ, և այս կը կոչուէր
իրաւունք անդրանկութեան. բայց այս ա-
նարդար իրաւունք վաղուց ջնջուած է. այժմ
բոլոր մանչ և աղջիկ զաւակներ գրեթէ
հաւասար կը ժառանգեն: Սակայն երիցա-
գոյն որդիք միւսներէն աւելի պարտքեր
ունին: Ահաւասիկ ամենուր ծանօթ է Պ.
Վահան, այն ծերունի ատաղձագործն*, որ
անցեալ տարի մեռաւ, իւր քեռորդուոյն
թողլով իւր բնակարանն: Այդ ծերունին
տասն տարեկան եղած ժամանակ զրկուեցաւ
իւր ծնողքէն, և միայն քոյր մի ունէր տասն-
եւվեց տարեկան: Այնքան նիհար և այն-
քան վատառուղջ էր, որ իւր կեանքէն կը
վախցուէր: Աղքատութիւն և վիշտ բոլորու-
ովին խանդարելով իւր կազմն, ծանր հիւ-
ւանդութեան մէջ ինկաւ. ինչ ընել, տունն
ստակ չկար. քոյրն չէր կարող աշխատիլ,
որովհետեւ պարտաւորեալ էր հիւանդ մա-
նուկին վրայ հօկելու: Շատ խորհելէն յե-
տոյ, բարեսիրտ հարուստ մարդու մի ներ-
կայացաւ, իբրեւ լուացարար, և իւր աշ-

խատու թեան փոխարէն խնդրեց միայն որ
թոյլ տան բնակարանին ստորին սենեակ-
ներէն միոյն մէջ իւր հէգ* փոքրիկ եղբայ-
րը խնամել, Առաջարկութիւնն ընդունուե-
ցաւ : Երբ հիւանդն աղէկցաւ, քոյրն ստաղ-
ձագործի մի քով դրաւ զայն, և իւր շա-
հաձ գրամով եղբօրն ապրուստը կը հոգար :
Եղբայրն, իւր քրոջ անձնուիրութիւնը
տեսնելով, սկսաւ ինքն ալ աշխատիլ բոլոր
ջանքով, և իւր արուեստին մէջ բաւական
առաջ երթալով, երբ սակաւ ինչ ստակ շա-
հեցաւ, իւր քոյրն ազատեց ծառայութենէ
և քիչ յետոյ զայն ամուսնացուց. բայց տասն
տարուան միջոցի մէջ թէ՛ քոյրն և թէ՛ ամուսինը մեռան : Յայնժամ փոքրիկ եղբայրն,
որ այլ եւս մեծցած էր, իւր քովն առաւ
քեռորդիներն, և իւր կեանքը նոցա պար-
տական համարելով, չուզեց բնաւ ամուս-
նանալ, ու իւր բոլոր հարստութիւնն իւր
քրոջ անդրաբնի զաւկին թողուց : Տարակոյս
չունիմ, որ դու ալ այսպիսի բարի հօրեղ-
բայր պիտի լինիս, աղնիւ Արամ, եթէ եր-
բէք դանուխ այսպիսի պարագայի մէջ :

ՅՕ ՈՐԲ

— Ո՛հ, տէր, սրչափ կ'օրհնեմ զՍ.սա-
ուած, զի անպաշտպան չեմ աշխարհի մէջ,
ինչպէս շաղտցպան Տիգրանին որդին Եր-
ուանդ: Խեղճ տղան՝ ո՛չ ծնողք ունէր և ոչ
եղբայր կամ քոյր, և իւր հօրեղբօրորդիք
չուղեցին զայն պաշտպանել:

— Շատ պարտաւելի է նոցա այդ գործն.
հօրեղբօրորդիք հեռաւոր եղբայրներ կը
սեպուին, և այնպէս պէտք է օգնեն միմ-
եանց: Բայց, ինչպէս գիտէք, փոքրիկ Եր-
ուանդ բոլորովին լքեալ չ'մնաց: Իւր հայրը
բարի և հաւատարիմ շաղտցպան մի էր, և
բոլոր շրջակայ գիւղացիք գոհ էին իրմէ.
անգամ մի ջուրի սաստիկ հոսանքով իւր
աղօրիքն* ողողեցաւ* բոլորովին. քաջասիրտ
Տիգրան ուղեց գիւղացիներուն ցօրենի
պարկերն հոգանքէն ազատելի և ինքզինք
վտանգի մէջ դրաւ, զո՛հ երթալով ջուրերուն
բռնութեան: Բոլոր գիւղացիք սքանչացան*
Տիգրանի անձնուիրութեան վրայ, և նորա
Երուանդ որդւոյն պաշտպան կանգնելով,

զինքն ընդունել տուն մտակայ վանքին
որբանոցին մէջ: Մայիս ամսոյն մէջ գնա-
ցի տեսայ զինքն. իւր գտնուած վանքն,
որ այժմ որբերու խնամատուն* եղած է,
բաւական ընդարձակ շէնք մի է, օդաւէտ
և գեղեցիկ գիւրքով: Երուանդ նոյն վանքին
մէջ, այլ եւ այլ ուսմանց հետ, կ'ուսանի
նաև գործնական երկրագործութիւն, և
վտահ եմ թէ օր մի բարի և քաջ աղայ
պիտի լինի և իւր հայրենեաց պիտի հա-
տուցանէ այն բարիքներ, զոր նմա շնորհեց
հայրենիք:

— Խնամատունք ուստի՞ կ'ընդունին իւր-
եանց պէտք եղած ապրուստի միջոցներն:

— Նոքա կանգուն կը մնան իւրեանց
հաստատուն կալուածներով, որ աղքին
կողմանէ նուիրուած են, կամ բարեգործ
անձանց ողորմութիւններով: Շատ առարի-
նի մարդիկ, երբ զաւակ չ'ունենան, իւր-
եանց հարստութիւն կտակ կ'ընեն որբանոց-
ներու և աղքատանոցներու, որոց մէջ աղ-
քին թշուառները կը պատսպարուին և կը
խնամուին:

Այսպէս շատ վանքեր կան մեր երկրին

մէջ որք հեռոցհեռէ ծերանոց, որբանոց, հիւ-
ւանդանոց պիտի լինին, ինչպէս էին եր-
բեմն: Ազգն իւր որբերն ու թշուառներ
անպաշտպան չէ թողած և պիտի չ'թողու:
Հայրենիք ամենուս հասարակաց ծնողն է,
ամենէն մեծ ընտանիքն է: Մէկտեղ ապ-
րիլ՝ միաբան սիրով, իւր ազգակիցներ սի-
րել իւր անձէն աւելի, նոցա երջանկու-
թեան վրայ ուրախանալ և թշուառու-
թեան վրայ կարեկցիլ*, խնամել զայնս՝
երբ պէտք ունին, պաշտպանել՝ երբ նեղու-
թիւն կրեն, աւելի սիրել չարչարու իւրքան թէ
նոցա չարչարանքը տեանել, և ամենքն ՚ի մի-
ասին մէկ սիրա, մէկ հոգի լինիլ, ահաւա-
սիկ այս է ընտանիքն, և այս է նաև հայ-
րենիքն:

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

1⁰ Հայր եւ մայր իւրեանց զաւակներն կը
սիրեն սրտագին. մայրն կը յայտնէ նոցա իւր
գորով, եւ հայրն կ'ուսուցանէ նոցա մարդկա-
յին պարտոց զգացում:

2⁰ Բնութիւն, սիրա եւ սարաք կ'ուսու-
ցանեն մեզ սիրել մեր ծնողք:

3° Երասխագիտութիւնս պէտք է ցոյց տամք մեր ծնողաց որք մեզ տուին կեանք, սնունդ, եւ դաստիարակութիւն :

4° Պարտաւոր եմք միշտ մեծարել մեր ծնողքն, ինչ հասակի եւ վիճակի մէջ ալ լինիմք :

5° Պարտիմք մեր ծնողաց հնազանդութիւն, քանի որ նոցա հրամաններ բարի են : Նոքա իրաւունք ունին զմեզ պատժելու : Հայրական իշխանութիւնն, որ երբեմն չափ չունէր, այսօր չափաւորուած է, որովհետեւ մարդիկ այժմ աւելի գովութ ունին : Բայց եթէ կը սիրեմք մեր ծնողք, պէտք է միշտ հնազանդիմք նոցա բարի խորհուրդներուն :

6° Իւրաքանչիւր ոք պարտաւոր է պաշտպանել եւ օգնել իւր ծնողաց՝ անանորիտութեամբ, այսինքն, իւր անձնական շահեր մոռնալով :

7° Եղբարք եւ քոյրք, եւ ընդհանրապէս բոլոր ազգականք պարտաւոր են զիրար սիրել եւ օգնել : Երեցք պէտք է կրտսերներն պաշտպանեն, եւ կրտսերք պէտք է յարգեն եւ հնազանդին երէց եղբարց :

8° Հայոց մէջ որքերն անպաշտպան չեն մնար : Նոքա կը պատասպարուին եւ կը խնամուին գթութեան յարկերու, վանքերու մէջ, ինչպէս անօգնական հիւանդներն ու ծերունիներ :

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ

1^o Պատմէ ինձ նշանաւոր օրինակներ, թէ ի՞նչպէս ծնողի խրեանց զարակները կը սիրեն: — Այս սէրը պէ՛տք է երբեմն լռէ ուրիշ պարտքերու առջեւ:

2^o Բնութիւնն ի՞նչպէս կ'օգնէ մեր սրտին, սրպէս զի մեր ծնողքը սիրեմք: — Բացատրէ թէ ի՞նչպէս կը հասկնաս:

3^o Թուէ տեսնեմ բոլոր այն բարիքներն, զոր մեր ծնողքէն կ'ընդունիմք: — Սոյն բարիքներն ընդհանրապէս ի՞նչ զգացում կու տան մեզ:

4^o Եթէ պէտք է մեծարեղ մեր բարերարներն, ուրեմն ո՞ր անձերն ամենէն աւելի պարտաւոր եմք մեծարել: — Կարելի՞ է սրտանց սիրել անձ մի, զոր չեմք մեծարեր:

5^o Ի՞նչ իրաւամբ պարտիմք հնազանդիչ մեր ծնողաց: — Հայրական իշխանութիւնն կրնայ այսօր անսահման լինել, ինչպէս էր ժամանակաւ: — Ի՞նչ է չարահասութիւնն:

6^o Պատմէ ինձ մէկ կամ աւելի օրինակներ որդիական անձնուիրութեան:

7^o Ի՞նչ է ընտանիքն: Պատմէ ազգականաց գլխաւոր անդամոց անուններն: Նոքա ի՞նչ յարաբերութիւն պէտք է ունենան միմեանց հետ:

8^o Ի՞նչ է որք մի: Լքեալ որբերն ո՞վ կը խնամէ:



ԳԼՈՒԽ Բ. — ՎԱՐԺԱՐԱՆ

1^o ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԴԱՍԵՐՆ

Ութ օր յետոյ, տղայք նոր դպրոց մը-
տած էին, երբ փոքրիկ Խորէն, որ հաղի-
ութեամբայ էր, որոշեալ ժամէն հինգ վայր-
կեան յետոյ, վաղելով հասաւ շնչասպառ:

— Ի՞նչու այսպէս ուշացար, հարցուց
դաստիարակն:

— Ո՛հ, տէր, վասն զի մեծ պտոյտ մի
ընել պարտաւորեցայ, Արմենակին տան
առջեւէն չ'անցնելու համար:

— Եւ ի՞նչ պատճառաւ:

— Վասն զի ամեն գիշեր նորա մեռած
մօր ուրուականն* կ'երեւի:

— Ուստի՞ իմացար զայդ, և ի՞նչպէս ալ
կը հաւատաս այդպիսի յիմար բաներու:

— Ո՛հ, շատ ստոյգ է, տէր, ես իմ ա-
ջօք տեսայ:

— Ի՞նչ տեսար:

— Երէկ երեկոյ ժամ տասնեւմէկին, ծը-
նողքս դիմաւորելու համար, դաշտ դնացած

էի. վերադարձին քիչ մի ետ մնալով, տեսայ պղտիկ լոյս մի, որ գեանէն քիչ բարձրութեամբ կը վազէր, Արմենակին հօր մարդին* մէջ:

Բոլոր աշակերտք մեծ քրքիջով* խնդացին:

— Եւ դու այդ լոյսն ուրուակա՞ն կարծեցիր, հարցուց երիցագոյն աշակերտն Հայկ:

— Բա՛հ, ուրիշ ի՞նչ կարելի էր լինել:

— Այդ լոյսը շրջնոյիկ* հոռւ մ'է: Չե՞ս յիշեր ուրեմն, որ մեր դասատուն անցեալ օր ըսաւ մեզ, թէ այդ լոյսերը ճահիճին* շոգիներէն կը գոյանան, վասն զի ջրածին* կոչուած կազ* մի կը պարունակեն, որ շատ դիւրաւ կը բորբոքի: Իսկ ուրուականաց գալով, նոքա երբէք գոյութիւն ունեցած չեն, և առասպելներ են. այնպէս չէ՞, աէր:

— Տարակոյս չ'կայ. աւելորդ նախապաշարու մ'է այդպիսի բաներու հաւատք ընծայել: Կ'երեւի թէ Խորէն վախցեր է և փամփուշտը* լապտեր կարծեր է, կամ մանաւանդ լապտերն ուրուական:

Աշակերտք դարձեալ սկսան ծիծաղիլ:

— Ո՛հ, ես լաւ դիտեմ, ինչ որ կ'ըսեմ,
կրկնեց խորէն բարկութեամբ:

— Բայց որովհետեւ դասատուն է որ
քեզ կը բացատրէ... գոչեցին միւսներն:

— Նա տեղեկութիւն չունի. ինքն ինձ
հետ չէր որ դիտնայ: Ես պարտաւոր չեմ
նորա ամեն խօսքերուն հաւատալ:

Ամեն ոք լռեց. խորէն լիրբ պատասխան
տուած էր:

2°. Ս Է Ր Ա Ռ Վ Ա Ր Ժ Ա Պ Ե Տ Ն

— Դասարանին սա ծայրը դնա, պարհն,
հրամայեց դաստիարակն: Այդ տեղ, դրա-
սեղանին վրայ պիտի կանգնիս առանձին,
մինչև դքեզ հրաւիրեմ: Լիրբ տղայք պէտք
չէ խառնուին այլոց հետ:

Խորէն շտապ հոն դնաց, ամօթէն երեսը
կարմրած, աչերն ուռած: Բոլոր աշակերտք
իւրեանց նայուածքն յառած* էին նորա
վրայ: Իսկ խորէն հազիւ թէ դրասեղանին
վրայ ելած էր, հեկեկանօք սկսաւ լալ:

Այս անկեղծ զղջում դաստիարակին սիրտն
յուզեց, որ փափաքեցաւ ներել այն անմիտ
տղուն:

— Այժմ, եկ, մտեցիր ինձ, Խորէն, և
ա՛լ մի լար: Իբրեւ պատիժ՝ կ'ուզեմ որ
հարցմանցս պատասխան տաս: Տեսնեմք,
սրբէ աշերդ և խօսէ: Դասատուն սիրե՞լ
պէտք է թէ ատել, կամ պէտք է անտար-
բեր լինիլ:

— Պէտք է... զայն սիրել... տէր, թո-
թովեց մանուկն:

— Եւ ի՞նչու համար:

— Վասն զի նորա տուած դասերն օգ-
տակար են:

— Աւելցուր նաեւ. թէ օգտակար են
իւր յանդիմանութիւններն ու պատիժներն
անգամ, վասն զի ձեր շահուն համար են:
Դասատուն զքեզ կը սիրէ, և իւր սէրը կը
յայտնէ՝ քո վրայ հսկելով և զքեզ կշտամ-
բելով*, նոյն իսկ քո լաւութեանդ համար,
որպէս զի ապագային մէջ բարի և պար-
կեշտ մարդ լինիս:

3^o ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԵԾԱՐԱՆՔ

— Ուրեմն ի՞նչ զգացում պէտք է ունե-
նաս դաստիարակին համար:

— Երախտագիտութեան զգացում, տէր:

— Ճիշդ է: Բայց պէ՞տք է միթէ ան-
խտիր* վարուիլ նորա հետ, ինչպէս կը վար-
ուիս ընկերացդ հետ. պէ՞տք է չհաւատալ
նորա խօսքերուն, պէ՞տք է ընդդիմաբա-
նել*:

— Ո՛չ, տէր, այլ պարտական եմ զայն
մեծարել... և շատ ներում կը խնդրեմ,
ձեզ...:

— Բաւ է, բաւ է. մի լար այլ եւս.
մարդ պէ՞տք է քաջասիրտ լինի, և դու մարդ
լինելու ճամբու մէջ ես: Արդէն գիտես,
այնպէ՞ս չէ, թէ միայն վատ կը թուած ար-
դայք են, որ վստահութեան արժանի մեծ
մարդոց չեն անսար. և դքեզ կը թեւո
աշխատող դատարակէն աւելի ո՞վ կայ
վստահութեան արժանի: Անշուշտ դու չես
կարող տակաւին հասկնալ թէ նա ի՞նչքան
բարիք կ'ընէ քեզ: Նա է որ տգիտութիւնդ
կը լուսաւորէ, և քեզ կ'ուսուցանէ թէ ի՞նչ
կերպով օգտակար կարես լինել թէ՛ քեզ և
թէ՛ այլոց: Նա քեզ համար երկրորդ հայր
մի է. ճնողքդ քեզ առին կեանք մարմնոյ,
և ամեն օր կու տան կեանք սրտի, իսկ

դատախօսարակը քեզ կու տայ կեանք իմացա-
կանութեան* : Գրել կարդալ ուսանելով,
դու քո նմանեաց հետ հաղորդակցելու մի-
ջոց կ'ստանաս : Տղէտն հեռաւոր տեղ գը-
նացած ժամանակ, չէ կարող լուր տալ իւր
ծնողաց և ոչ ընդունիլ. չէ կարող առեւ-
տուրի մէջ պայմանագրութիւն* ընել. չէ
կարող առմասկ մի կարդալ կամ պարզ ծա-
նուցում մի հասկնալ. միշտ պարտաւորեալ
է ուրիշին հարցունել, թէ ինչ պէտք է
գործել կամ չ'գործել. ստուգիւ տգէտ
մարդը պակաս մարդ է : Բայց գրել կար-
դալ կրթութեան առաջին քայլն է միայն :
Եթէ չ'գիտես սակաւ ինչ ուղղագրութիւն
և քերականութիւն, դրածդ ո՛չ կը կարդա-
ցուի և ո՛չ կը հասկցուի. եթէ չ'գիտես սա-
կաւ ինչ ազդիւղ պատմութիւնն ու աշխար-
հագրութիւն, և նաև այլ և այլ քաղաք-
ները, սահմաններն, օրէնքներն ու իշխան-
ներն, յայնժամ կը նմանիս կարդալ չ'գիտ-
ցողի, վասն զի ո՛չ ազգային լրագիր կը հաս-
կնաս և ո՛չ հայոց գիրքեր. դու յայնժամ
քուէ* կու տաս առանց գիտնալու, և չ'կա-
րես լինել կատարեալ հայ քաղաքացի : Վեր-

Չապէս, եթէ դու խեղացի և աշխատասէր լինիս, և ուզես ուսմունքդ յառաջ տանիլ, ի՞նչպէս կարես առանց օգնութեան դասատուներու, որք կ'ուսուցանեն քեզ, ինչ որ չգիտես:

Յայտնի կը տեսնես ուրեմն, թէ, երբ դու բարի մարդ և առաքինի հայ լինիս, մասամբ քո ուսուցչին աշխատութիւնն է այն, և դու ապերախտ պիտի լինէիր, եթէ մեծարանք և երախտագիտութիւն չ'յայտնէիր նմա:

4° ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

— Եւ գիտե՞ս, ի՞նչու պէտք է հնազանդիլ դաստիարակին: Վասն զի նախ և առաջ նա կը ներկայացունէ քո հայրդ, որ գրեզ կը յանձնէ դաստիարակին, տալով նմա իւր բոլոր իշխանութիւն, որպէս զի նորա ջանքով լինիս բարի տղայ, լաւ կըրթեալ ու դաստիարակեալ: Ի՞նչ պարտքեր որ ունիս հօրդ համար, նոյնն ունիս նաեւ քո դաստիարակին համար, որու արժանիքն աւելի բարձր է, որովհետեւ, առանց քեզ

հետ բնական կապ մի ունենալու , զքեզ կը սիրէ և քեզ բարիք կ'ընէ :

Բայ աստի , դաստիարակն ազգին ներկայացուցին* է . ազգն պաշտօն տուած է նմա , իմաստուն , պարկեշտ և օգտակար քաղաքացիներ պատրաստելու : Ազգն որչափ մեծ զոհողութիւններ* կ'ընէ , կրթելու համար իւր զաւակներ : Գիտէք , ինչ էր հին ժամանակի դպրոցն , խեղճ տնակ մի , մէկ հաս ընդարձակ սրահով , աղտոտ ու հինցած պատերով . անդ ոչ գիրք կար , ոչ մատենադարան* , ոչ իսկ դասարան : Ամեն տղայ պարտաւորեալ էր ձմեռն ածուխ բերել իւր հետ , կրակարանը վառելու համար : Այժմ գրեթէ բոլոր վարժարանք մեծ են , մաքուր , օգուտէտ և լուսաւոր , կարգալու և գրելու համար պատշաճ գրասեղաններով . անդ կան բաւական պիտանի գիրքեր , որմերուն վրայ կախուած վառաւոր աշխարհացոյցներ , նկարներ , երկրագունտեր , և ամեն կերպ գործիւններ՝ ուսանելու համար աշխարհագրութիւն , երկրաչափութիւն , բրնական պատմութիւն , նկարչութիւն : Դաստիարակն , որ երբեմն աշակերտաց նուէր-

ներով հազիւ կ'ապրէր, այժմ իւր վարձքն ազգին կողմանէ կ'ընդունի, բաւական դոհացուցիչ կերպիւ : Ծնողք այժմ իւրեանց զաւկին ուսման համար ուրիշ ծախք չունին, բայց եթէ փոքրիկ ամսաթուղակ մը, որ շատ տեղ ի գործ չգրուիր : Բայց որչափ օգտակար պիտի լինէր, եթէ ազգային կրթութեան համար տուրք մի սահմանուէր, և ամեն հայ յօժարակամ վճարէր իւր տուրքն, ազգային վարժարանաց աւելի կանոնաւոր յառաջագիմութեան համար : Ծնողք ոչ միայն իրաւունք, այլ նաեւ անհրաժեշտ պարտք ունին իւրեանց զաւակներ դպրոց խրկելու, և հայ դպրոցի մէջ կրթելու, վասն զի ամեն հայ զաւակ պարտաւորեալ է մտքի սնունդ առնուլ, մարմնոյ սննդեան հաւասար, և մանաւանդ ազգային դատարակութեամբ զարգանալու :

Այս ամենն, հարկաւ կը մտածէք, թէ մեծ ջանքերու կարօտ է, և ազգն ունի իւր մէջ նաև պատուական ընկերութիւններ, որ հայաբնակ զանազան կողմեր բազում վարժարաններ բացած են, որոց մէջ ձրի կրթութիւն կը տրուի ազգին զաւակաց : Շատ

լաւ, պէտք է ճանչնալ ուրեմն ազգին այս ամեն բարիքներն ու նոցա արժանաւոր հանդիսանալ, հնազանդելով դաստիարակին, որ ազգին կողմանէ իշխանութիւն ունի ձեր վրայ, և ճշդութեամբ կատարելով ձեր դպրոցական պարտաւորութիւններ :

5^o ԴԱՍԸՆԿԵՐՔ

— Դպրոցական պարտաւորութիւն, ըսի. ինձ կ'երեւի թէ փոքր մի յառաջ, երբ խորէնին պատիժ կու տայի, լսեցի որ ձեռնէ մին կ'ըսէր. « շատ լաւ եղաւ »: Այդ խօսքին դէմ շատ բարկացած եմ. պէտք չէ երբէք խնդալ ուրիշին կրած վշտաց վրայ, մանաւանդ երբ նա քո դասընկերն է : Ըսէ ինձ, խորէն, ի՞նչու համար չարութիւն է այս :

— Վասն զի դասընկերք իբր եղբայրներ են, և անցեալ օր դուք մեզ խրատեցիք, թէ եղբայրներ պէտք է սիրեն զիրար և օգնեն մին միւսին :

— Բայց, տէր, ի՞նչու դասընկերք իբր եղբայր կը համարուին, հարցուց Վահան : Նոքա բնաւ մէկ ընտանիքէ չեն, և նոյն իսկ

կարելի է , որ նոցա ծնողք թշնամի լինին :

— Տղայք պէտք չէ երբէք լուրեանց ծընողաց կռիւներուն խառնուին , բաց ի այն պարագայէն , ուր հարկ է զայնս պաշտպանել յարձակումներու կամ նախատինքներու դէմ : Երբ դպրոցին մէջ կը հաւաքուին կրթուելու համար , ամենքն ալ փոքրիկ Հայեր են , ամենքն ալ մի և նոյն Աղգին զաւակներն են , և պարտին միմեանց հետ վարուիլ իբր եղբայր :

Միւս կողմանէ , եթէ նոքա բարի և սիրուն լինին , շուտով կը բարեկամանան , ի միասին ապրելով , և այնուհետեւ միմեանց օգտակար լինել միայն կը մտածեն :

6° Ո՛Չ ԵՐԲԷՔ ՔՍՈՒԹԻՒՆ

— Բայց այսու հանդերձ , չգիտեմ ո՞վ էր , որ ըսաւ . « շատ լաւ եղաւ » :

— Տէր , Հայկն էր :

— Ա՛հ , Տիրան , աղուոր բան չէ ուրիշներուն ազեղ գործերն հռչակել : Քո այդ գործ , ուրիշ պարագայներու մէջ , կը կոչուի մատնութիւն , լրտեսութիւն , fun-

թիւն* : Խորէն փոքրիկ պատժոյ արժանի էր , բայց դու աւելի սաստիկ պատժոյ : Դու զբօսանքէ պիտի զրկուիս . երբ ուրիշներ խաղան , դու պիտի օրինակես և 'ի բերան ուսանիս բարոյականի ամբողջ ընկերակցութիւն գլուխն , ուր բացատրուած է թէ ինչ օգուտներ ունի միաբանութեան ոգին : Աւելի ծանր պատիժ պիտի տայի քեզ , եթէ չ'գիտնայի որ դուն առանց մըտածելու գործեցիր , և անկարող ես քսութեան նման այնչափ սեւ գործ մի կատարելու : Կը յուսամ թէ այլ եւս այսպիսի մեծ սխալ մի պիտի չ'կրկնես :

7^o ՄԻ՛ ՊԱՏՐՈՒԱԿ . ՄԻ՛ ԿԵՂԾԱԻՈՐՈՒԹԻՒՆ

— Այժմ՝ քեզ կ'ըսեմ , Հայկ , ի՞նչու դու ինքնին չ'խոստովանեցար :

— Չ'համարձակեցայ , տէր . կը վախնայի :

— Այդ ալ աղէկ չէ . պէտք չէ երբէք յանցանքը պատրուակել* , տղայք . պատրուակն սկիզբն է կեղծաւորութեան , որ մոլութեանց ամենէն տգեղն է : Անցեալ օր

Յողակ , դբօսանքի ժամանակ , դպրոցին պատուհաններէն միոյն ապակին կտորեր էր իւր դնտակով . ես բնաւ չէի տեսած , բայց ինքն անձամբ եկաւ խոստովանեցաւ ինձ , աղաչելով որ ներեմ : Յանդիմանութիւն անգամ չ'ուղղեցի , ընդհակառակն գովեցի զինքն իւր անկեղծ պարզմտութեան համար : Այսպէս պիտի ընեմ միշտ : Երբ մին յանցանք մի կը գործէ , ներողութեան արժանի լինելու լաւագոյն միջոցն է՝ յանցանքը խոստովանիլ և դարմանել . պատրուակելը փոքրիկ վատութիւն և փոքրիկ անպարկեշտութիւն է :

Քո լռութեամբ , նախ զինքդ արժանաւոր չես ցուցներ այն վստահութեան , զոր ունիմ ես ձեր ամենուն վրայ , իբրեւ պարկեշտ տղայք . բաց աստի , կը թողուս , որ փոխանակ քեզի մի ուրիշ անմեղ պատժուի , որ կատարեալ անիրաւութիւն է : Ուրեմն կը խոստանաս ինձ որ այլ ևս այսպիսի յանցանքի մէջ չ'գտնուիս , այնպէս չէ՞ : Կը ներեմ քեզ այս անգամ :

8° Ո՛Չ ԵՐԲԷՔ ԱՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

— Գամբ մեր դասին : Դու սկսէ , տեսնեմ , Արտաւանդդ :

— Տէր , չ'կրցայ ուսանիլ , որովհետեւ հայրս դաշտ տարաւ զիս իւր հետ :

— Ի՞նչպէս կարելի է այդ . երէկ երեկոյ տեսայ դքեզ , որ միւսներուն հետ կը խաղայիր , ժամը տասնին : Այնպէս չէ՞ , Յուլակ , քեզ հետ չէ՞ր միթէ :

— Տէր . . .

— Դու կը յիշես , դիտեմ , և չես ուզեր մատնել քո բարեկամ . լաւ , բայց շփոթութիւնդ կ'ապացուցանէ , որ ես սխալ չեմ տեսած : Ուրեմն , Արտաւանդդ , դու սուտ կը խօսիս :

— Ես . . . ես . . .

— Դու ևս յանցաւոր ես հայկին չափ , վասն զի պատրուակ և ստախօսութիւն հաւասար են և երկուքն ևս տգեղ պակասութիւններ են : Բայց քո յանցանքն աւելի վատ է , վասն զի դու կը ջանաս զիս խաբել : Միայն անկեղծութիւն և ուղղութիւն են ազատ մարդու արժանաւոր գործեր , և

այս երկու յատկութիւնք ինքնին բաւական
են զմեզ յարդելի ընծայելու համար իբր
պարկեշտ մարդ : Դու պէտք է ի բերան
ուսանիս ընթերցարանիդ մէջ ստախօսու-
թեան վրայ գրուած գլուխն , որ կը յայտնէ
թէ որքան ատելի բան է ստախօսութիւն ,
և որքան ամօթապարտ է նա որ կը ստէ :
Հին փիլիսոփայ մի գեղեցիկ խօսած է , թէ
ստախօսին պատիժն այն է , որ ոչ ոք կը
հաւատայ նոյն խկիւր ճշմարիտ խօսքերուն :

9° ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

— Տեսնեմք , Վահրամ , քո կարգն է .
պատմէ ինձ աշխատութեան վրայ քեզ
տուած ոտանաւորս :

Աշխատութիւն* ,

Մեր զօրութիւն . . .

— Բայց ի՞նչու չես շարունակեր . դո՞ւ
ալ չ'գիտես : Կ'երեւի թէ լաւ ըմբռնած չես ,
և գրեթէ չես աշխատած :

Սակայն գիտես դու , թէ աշխատութիւն
առաջին օրէնքն է մարդոյն , և ամեն մար-
դիկ , այր , կին , տղայ , պարտին աշխա-

տիլ: Նա որ ո՛չ իւր և ո՛չ այլոց համար կը
դործէ, անարժան է ապրելու: Քո հայրն
որ յարկիչ* է, լաւ դիտէ աշխատութեան
արժէքն. բոլոր իւր օրերն յարկերու վրայ
կ'անցունէ, արեւին ասթէն* նեղուելով և
ցուրտ հովերէն սառելով, և իւր անձ գա-
հավէժ* մեռնելու վտանգին մէջ կը դնէ.
և այս ամէն տառապանաց կը հանդուրժէ*
միայն իւր ընտանեաց ոգեպահիկն* հայ-
թայթելու* համար:

Եւ դո՛ւ, դու ամօթ չե՞ս զգար, վատ-
նելով* այն պատուական ժամանակն զոր
հայրդ կու տայ քեզ, որպէս զի կրթուիս:
Բարի զաւկի դործ չէ այդ:

Տեսնեմք ուրեմն աշխարհագրութեան
դասդ:

Ո՞ք են գլխաւոր քաղաքներ, որոց մէջ
աւելի բազմաթիւ հայեր կան: Դա՞րձեալ
չ'դիտես, ամօթալի բան է այդ: Ի՞նչպէս
հայ պիտի լինիս դու, որ չ'դիտես Վանի* և
Մուշի* պէս կարեւոր քաղաքներու անուն-
ներ, ուր ուրիշ ազգերէ աւելի հո՞ժ* բազ-
մութիւն կը կազմեն հայեր: Տարւոյն վերջն,
մրցանակաբաշխութեան ժամանակ, դու

պիտի չ'ընդունիս այն ուսմանց վկայագիրն* զոր ամեն դպրոցէն մեկնող ընթացաւարտ աշակերտ կ'ընդունի : Այս տարի քննութիւնը շատ խիստ պիտի կատարուի , և դու պիտի ստիպուիս տարի մ'ալ դըպրոց մնալ , և ընտանեացդ սիրտը պիտի վիրաւորես : Այսպիսի ընթացքով , ամբողջ կեանքդ ծուլութեամբ պիտի անցունես , եթէ այժմէն չ'զգուշանաս . ինչ որ այլք մի քանի ամսոյ մէջ կ'ուսանին , դու տարիներով հազիւ պիտի ուսանիս զայն , և դպրոցական կեանքէն յետոյ , դու ո՛չ լաւ գործաւոր պիտի լինիս և ո՛չ լաւ երկրագործ :

Ծոյլերն , տես , ո՛րքան անմիտ են . ուզեն չուզեն ստիպուած են այլոց չափ աշխատելու . բայց բնաւ օգուտ չեն կրնար քաղել իւրեանց աշխատութենէն , վասն զի պէտք եղած ժամանակ չեն աշխատիր :

10° ՆԱԽԱՆՁԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Վահրամ շատ զգածուեցաւ դասատուին գիտողութիւններէն :

— Ո՛հ , ոչ , տէր , գոչեց . կ'ուզեմ աշ-

խատիւ, որչափ որ կարողութիւն ունիմ, զձեզ գոհացունելու համար, զձեզ և իմ հայրս: Ձեմ ուղեր անօգուտ լինել իմ ընտանեաց, մինչ ուրիշներ կը ջանան օգտակար լինել:


— Գովելի է այդ փափաքդ • բայց կ'ուզէի որ կարգիդ մէջ փոքր մի նախանձաւորութեան* ոգի ունենայիր, և դասընկերացդ մէջ առաջիններէն մին լինէիր: Առանց նախանձոտ լինելու, մարդ կարող է և պարտի փափաքիլ, որ իւր ընկերներն գերազանցէ և դոնէ լաւագոյններէն լինի. նա՛ որոյ վրայ կը պակտի սոյն զգացումն, կը յայտնէ թէ անձնասիրութիւն և արժանապատուութիւն չունի:

Զաւկին յաջողութիւնը լաւագոյն վարձատրութիւնն է ծնողաց. այն է միայն նոցա ուրախութիւն և փառասիրութիւն. և դուք ձեր անխոնջ* աշխատասիրութեամբ պարտաւոր էք նոցա հատուցանել փոխարէնն այն բոլոր զոհողութեանց, զորս նոքա չեն խնայեր բնաւ ձեր զարգացման համար:

11° ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԴԱՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

— Վահրամ, դու զբօսանքի ժամանակ դասերդ պէտք է ուսանիս, և այս երեկոյ, դասառութիւնն աւարտելէ յետոյ, մեկնելէդ առաջ, համար պէտք է տաս ինձ:

Թերեւս դու աւելի լաւ պատմես քո դասն, եթէ ժամանակդ չ'վատնես ընկերացդ հետ շաղիաղփելով*, եթէ նոցա և քո աշխատութիւն չ'խաբանես անմիտ կատակներով, և ուշադրութիւնդ չ'ցրուես այս ու այն կողմ՝ յածելով*: Դպրոցին մէջ աշխատութեան առաջին պայմանն է լռութիւն և ուշադրութիւն: Դպրոցը բանակի կը նմանի, ուր կարգապահութեան դէմ եղած փոքրիկ զանցառութիւն մի իսկոյն կը պատժուի, վասն զի առանց անոր անկարելի է ոչ մի օգուտ քաղել: Իւրաքանչիւր դործ պէտք է իւր ժամուն կատարուի ճշդութեամբ, առանց արդելք լինելու մին միւսին:



Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ո Ի Թ Ի Ի Ն

1° Միտ դրէք դաստիարակին դասերուն, որ ձեր մտաց նախասպաշարումները կը վարատէ, եւ կ'ուսուցանէ, օրինակի համար, շրջանշիկ հուրն ուրուական չ'համարիլ:

2° Դաստիարակն իւր աշակերտաց հետ կը վարուի իբրեւ իւր զաւակաց հետ. ուստի իբր հայր պէտք է սիրել զինքն:

3° Աշակերտք դաստիարակին կը պարտին մեծարանք, երախտագիտութիւն, վասն զի նորա ձեռամբ կրթուելով, կատարեալ մարդ եւ կատարեալ քաղաքացի կը պատրաստուին:

4° Տղայք պարտաւոր են հնազանդիչ դաստիարակին, վասն զի իւրեանց հօր կողմանէ յանձնուած են նմա, եւ վասն զի նաեւ դաստիարակը ներկայացուցիչն է ազգին, որ նորա պաշտօն տուած է զայնս կրթելու. ազգն մեծ զոհողութիւններ կ'ընէ դաստիարակութեան համար. դպրոցներն այսօր աւելի քաղմարիւ, աւելի մեծ, աւելի առողջարեւ եւ աւելի նոյս են քան թէ երբեմն: Միայն հարուստ ծնողք արեսաթոշակ կը վճարեն, իսկ աղքատք ձրի կը կրթուին:

5° Դասընկերք պարտաւոր են միմիանց օգնել եւ զիրար սիրել իբր եղբայր:

6^o Աշակերտ մի պէտք չէ երբէք ֆուռփիւն ընէ իւր ընկերաց վրայ եւ նոցա յանցանքը մտնէ :

7^o Պէտք չէ երբէք իւր գործած յանցանքը ծածկելու ջանալ . պատրուակն ու կեղծարուրփիւն մոլութիւններ են :

8^o Պէտք չէ երբէք սեղ . անկեղծութիւնն պարկեշտութեան մէկ ձեւն է :

9^o Եթէ աշակերտն դպրոցէն չ'սկսի աշխատիլ , շատ հաւանական է որ անօգուտ մի մարդ պիտի լինի թէ՛ իւր անձին , թէ՛ այլոց եւ թէ՛ իւր երկրին : Ծուրարփիւնն անմտութիւնն է :

10^o Պէտք է նախանձարուրփիւն ունենալ , այսինքն , պէտք է բաղձալ իւր ընկերաց մէջ առաջիններէն լինելու :

11^o Կարգապահութիւնն , այսինքն , լուութիւն եւ ուշադրութիւն , հարկաւոր է դպրոցին մէջ :

Հ Ր Ս . Հ Ս . Ն Գ .

1^o Ի՞նչ է նախապաշարումն : — Ի՞նչու կարելի չէ որ մեռեալք գիշերներն ելնեն դերեզմաններէն եւ մեր աչաց երեւին , շրջմովիկ հուրի , ուրուականի եւ ուրիշ ձեւերով :

2^o Ի՞նչու աշակերտք պարտին սխեղ իւրեանց դաստիարակն , երբ նոյն իսկ պատժուին :

3° Թուէ գլխաւոր բարիքներն կրքորքեան :

4° Ի՞նչ իրաւամբ դաստիարակն իւր աշակերտներէն կը պահանջէ մեծարանք եւ հնազանդութիւն : — Կրնա՞ն պատմել, թէ ազգն ի՞նչ զոհողութիւններ կ'ընէ իւր զաւակաց կրթութեան համար :

5° Դասընկերք դպրոցին մէջ ի՞նչ պարտքեր ունին առ միմեանս :

6° Պատմէ ինձ մէկ երկու նշանաւոր օրինակներ մասնորքեան կամ քաղաքեան :


7° Ի՞նչ է կեղծաւորութիւնն :

8° Բացատրէ թէ ի՞նչպէս անկեղծութիւն եւ ազատութիւն նոյն իմաստն ունին, եւ ի՞նչու ազատ մարդն պէտք է միշտ անկեղծ լինի :

9° Չեռական աշխատութենէ զատ, կայ՞ ուրիշ կերպ աշխատութիւն : — Շինէ առակ մի, որոյ մէջ նկարագրես մեղուներն ու պիծակներն*, եւ ցոյց տաս թէ աշխատողն գերազանց է քան զծոյլն :

10° Բացատրէ թէ ի՞նչպէս կը տարբերին նախանձաւորութիւն եւ նախանձոտութիւն :

11° Կարգապահութիւնն արդէ՞ք է միթէ աշակերտին ազատութեան : Մեկնէ՞ թէ ի՞նչպէս կարգապահութեան նպատակն է աշակերտին շահն ու ամենուրեւ շահն :



ԳԼՈՒԽ Գ. — ՀԱՅՐԵՆԻՔ ԿԱՄ ԾՆՆԴԱՎԱՅՐ

1878 տարւոյ յուլիս ամսոյն 2/14 օրն դեղեցիկ օր մի էր վանայ դիտաւոր վարժարանին աշակերտաց համար :

Դաստիարակն առաջարկած էր աշակերտաց , թէ հետեւեալ օրը շրջագայութեան պիտի երթային Այգեատանի* կողմերն :

Նոյն օրն առաւօտուն կանուխ աշակերտք հաւաքուած էին վարժարան , իւրաքանչիւրն իւր ցերեկեայ պաշարն հետն առնլով : Ամենուն դիմաց վրայ ուրախութիւն կը փայլէր , և մեծ աղմուկով կը խօսակցէին միմեանց հետ , վասն զի նախորդ օրն յուսալից լուրերը առած էին իւրեանց դաստիարակէն :

1^o ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Երբ խմբովին ճանապարհ ելած էին , քաղաքէն դուրս , մի ամայի խրճիթէ յանկարծ դուրս ելան սեւ ազուաներ և սկսան կրկուարով թռչիլ :

— Չարագուշակ* նշան , ձայնեց Անու-

շաւան . անպատճառ այսօր վտանգ մը պիտի հանդիպի մեզ :

— Ի՞նչպէս , կը հաւատամ այդպիսի հմայութիւններու* , ըսաւ Հայկ :

— Բա՛ , ճշմարիտ չէ՞ միթէ , տէր , զի ազգաւներու երեւոյթն աղէկ նշան չէ . իսկ անծեղը* նշան է բարի լուրերու :

— Քո տղիտութեան և պարզմտութեան վրայ շատ կը ցաւ իմ , Սնուշաւան , պատասխանեց դաստիարակն : Կը տեսնեմ ստուգիւ , որ դու քո ժամանակի մարդը չես : Կը հաւատամ արդեօք նաեւ մամիկներուն պատմած ամեն առասպելաց . կը հաւատամ թէ ծնած օրուանդ աստղն աղդեցութիւն ունի քո վրայ . կը հաւատամ քունիդ մէջ տեսած երազներուդ . կը վստահի՞ս միթէ երազահաններու* և բախտախօսներու* . . . : Բայց ահա վիզդ դերձան մի կապեր ես . տեսնեմ , Սնուշաւան , ի՞նչ է այն :

— Ահաւասիկ , տէր , եռանկիւնի փոքրիկ ծրար մի է , որոյ մէջ մեծ մայրս թուղթի կտորներ և խօտի տերեւներ դրաւ , պատուիրելով որ բնաւ վիզէս չհանեմ :

— Եւ ի՞նչ օգուտ ունի այդ :

— Մամն յայտնեց ինձ, թէ նա որ այսպիսի ծրար մի կը կրէ իւր վրայ, ամեն շարիքներէ ու վտանգէ կ'ազատի:

— Բայց այդ ամենը սուտ ու խաբէական բաներ են, տղաս, և բնաւ օգուտ չունին: Դպրոցին մէջ դուք արդէն ուսած էք, թէ պէտք է հաւատալ, ինչ որ խելքով կը համոզուինք թէ կարելի է. և թէև ճմարտութիւնը կատարեալ ճանաչելու համար գիտութիւն հարկաւոր է, բայց ձեր տկար խելքովը իսկ կարող էք արդէն հասկնալ, թէ կախարդութիւններ*, յուռութներ*, և հմայութիւններ տդէտ մարդոց ձեռքով տարածուած նախապաշարումներ են:

— Կը յաւիմ, տէր, որ այսպիսի յիմարական բաներու հաւատք ընծայեր եմ, կրկնեց Անուշաւան, և ի սրտէ ներում կը խնդրեմ զձեզ վշտացնելուս:

Դասատուն ներեց Անուշաւանին և սկսան յառաջ երթալ դաշտին մէջ: Ճանապարհին եղերքը կը բարձրանար մի դարաւոր ուռենի* որոյ ճիւղերէն կապուած էին քուրջի կտորներ, և կանայք նուիրական կը հա-

մարէին զայն: Աշակերտք զայն տեսնելով,
գոչեցին միաբերան:

— Ահաւասիկ, տէր, սուրբ ծառն (¹):

Դասատուն ծիծաղեցաւ, և բացատրեց
նոցա, թէ ուստի ծագումն առած էր այդ
աւելորդապաշտութիւն* և թէ ինչ բնա-
կան օգուտներ ունէր ուռնին:

Ապա շարունակելով իւրեանց ճանա-
պարհ, բոյսերու մէջէն քաղեցին նախ խո-
տեր՝ դասատուին բոյսերու հաւաքածոյին*
համար, վասն զի ամեն շաբաթ բուսաբա-
նութեան վրայ դաս մի կու տար իւր աշա-
կերտաց. գտան փոքրիկ սերեփոռկը* որ
առողջարար է տենդի համար, եզնաշեզուն*
որ հազը կ'անցունէ, երիցոռկն* որ դեղա-
ջուր շինուելով կը գործածուի:

Կը տեսնե՞ս, Անուշաւան, ըսաւ դաս-
տիարակն, ահաւասիկ սոքա են բուն դաղտո-
նիքները, զոր մեր ժամանակի մարդ մի պէտք
է ուսանի. դիտութիւնը կը յայանէ տուն-
կերուն զօրութիւնը ու այնպիսի դեղեր կը
շինէ, որք մարդոյն առողջութիւնն աւելի

(¹) Տես Նխարագրական Ողեւորութիւն Մի-
րախորեանի, Բ. հատոր, էջ 154:

լաւ կը պահպանեն , քան թէ ամեն հմայեակներ* և նախապաշարող գործողութիւններ : Ճշմարիտ վհուկը* բժիշկն է , որմէ զատ չկայ ուրիշ վհուկ , լուսաւորեալ հայու մի համար :

Աշակերտք դաստիարակին շուրջ խմբուած էին , որ օգուտ քաղելով նոցա ուշադրութենէն , սկսաւ խօսիլ ազգին վրայ :

2^o Ս Է Ր Ա Ձ Գ Ի Ն

— Տղայք , յարեց դաստիարակը , կը տեսնէք սա հին բերդին* վրայ գրուած այլանդակ գիրերը . կը կարծուի թէ Շամիրամի* ձեռքով քանդակուած* են նոքա և կը կոչուին քերեռագիր* : Այս քանդակները շատ հին յիշատակներու մնացորդներ են , և կը վկայեն թէ այս երկիր պատմական շատ հնագոյն երկիր մի է : Ըսէ ուրեմն , Արամ , պէտք է սիրել Հայրենիքը , այնպէս չէ :

— Այո , տէր , վասն զի նա մեր ծնողն է :

— Բացատրէ , տեսնեմ , ի՞նչպէս կը հասկընաս :

— Վասն զի բոլոր հայ ընտանիքներ մի
և նոյն նախահարքն ունեցած են, մի և
նոյն երկրին վրայ առած են իւրեանց ծա-
ղումն ու անուն և բնակած են երկար
դարերէ ի վեր, մէկ լեզուով, մէկ արիւ-
նով, մէկ բարքով: Ուրեմն ամեն հայք ազ-
գական կը համարուին իրարու և ամենքն
ալ մէկ արմատի վրայ միացած ճիւղեր են:
Հայրենիք ազգային մեծ ընտանիքն է, որուն
զաւակներն եմք մենք, և մեր պարտքն է
Երախտագիտութեամբ սիրել զինքն, ինչպէս
կը սիրեմք մեր ծնողքն ու ընտանիքն:

3^o ԵՐԿԻՐՆ

— Այնպէս է. բայց ի՞նչու պէտք է սի-
րել նաեւ նոյն խակ երկիրն, հողն, ջուրն,
ծառերն, տուներն. ի՞նչու հայրենեաց օղն
ու երկինք այնքան սիրելի է պանդուխ-
տին:

— Ո՛հ, տէր, վասն զի մարդ բնականօրէն
կը սիրէ իւր ծննդավայրն* և նոյնպէս պէտք
է մտածել, թէ հայրենեաց հողին վրայ
աշխատելու են մեր հայրեր, և զանազան

շէնքերով զարդարեր և իւրեանց յաջորդ-
ներուն տուեր են իբրև ժառանգութիւն
իւրեանց աշխատութեան, և ամենքն այն
հողին վրայ մեռեր ու թաղուեր են, հայ
անուան արժանաւոր գործերով: Ի՞նչպէս
ուրեմն չ'սիրել այն երկիր, որ մեր նախ-
նեաց յատուկ բնակավայրն է, և այնքան
յիշատակներ ունի իւր մէջ:

4° ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ ՄԵԾԱՐԵԼ

— Յոյժ լաւ բացատրեցիր, բարեկամ:
Աւելցուր նաեւ թէ պէտք է հայրենի երկրին
յիշատակները մեծարել, ինչպէս են ազ-
գային պատմութեան երեւելի անձերը, դե-
ղեցիկ գործերն, ազնիւ աշխատութիւն-
ներն և նոյն իսկ մեծագործ անձանց դե-
րեզմաններն, և այս ամենուն հետ պէտք
է կապուիլ, ինչպէս նոյն իսկ երկրին հետ:
Յիրաւի երբեմն մեր նախնեաց իմաստու-
թեամբ չմտածելուն պատճառաւ, այրեցան
մեծ շէնքեր ու տաճարներ, և աւերակ
դարձան քաղաքներ ու աւաններ*, բայց
ամեն հայ կը ցաւի և կ'ամաչէ այսպիսի

գործերու վրայ, վասն զի բարի մարդ մի
չուզեր բնաւ, որ իւր ազգին հնութիւնն ու
հարստութիւնն յայանող առարկայները իը-
ճանան: Պէտք չէ երբէք ազգին անցեալը
պարսաւել, վասն զի նոյն իսկ քո անուն և
ընտանիք նախատած կը լինիս: Սիրել և
պատուել նախնեաց ամեն յիշատակները և
զանոնք աւելի ևս ճոխացունել, այս է ամեն
ճշմարիտ հայու գլխաւոր պարտքն:

5° ՀԱՅՐԵՆԻՔԸ ԶԹՈՂՈՒԼ

— Տէր, կը պատուիրէք սիրել Հայրենիքն
ու նորա յիշատակներ. բայց այնպէս կը
լսեմ, թէ ամեն տարի բազմաթիւ հայք կը
մեկնին իւրեանց հայրենիքէն և այլ եւս
չեն վերադառնար: Անցեալ օր մեծ հայրս
կը պատմէր, թէ իւր երիտասարդութեան
ժամանակ վանի հայերն այժմեան հայե-
րուն կրկնապատիկն էին, եթէ այսպէս շա-
րունակուի, օր մի Հայ պիտի չմնայ անդ:

— Այո՛, շատ իրաւունք ունի վարդան,
ձայնեց Գարեգին դեռ հազիւ եօթնամե-
այ. երկու շաբաթ առաջ տեսայ մայրս

որ թուղթ մի կը կարդար լալով. ես ալ լացի իւր հետ, և իւր վիզը փաթթուելով, ուզեցի պատճառն իմանալ: Մայրս պատասխանեց, թէ այն նամակն հօրմէս ընդունած էր, որ վեց տարիէ ի վեր մեկնած էր մեր տունէն: Ես տակաւին չգիտեմ, թէ ո՞վ է իմ հայրն, վասն զի իւր բաժնուած ժամանակ դեռ կաթ կ'ուտէի, և իւր նամակներէն միայն գիտեմ թէ ես հօրմէ զրկուած որբ մի չեմ:

— Հանդարտէ՛, տղաս, ինչո՞ւ կը ցաւիս թէ զուրկ ես մնացեր հօրդ տեսութենէն. նա թերեւս իւր դալուստն ուշայնելու պատճառներ ունի որ քեզ անծանօթ են:

— Բայց, Տէր, կրկնեց Վարդան, ի՞նչ պատճառ ունին արդեօք ամեն նոքա որք իւրեանց հայրենիքէն կը հեռանան:

— Կը կարծեմ, ընդմիջեց Արտաւազդ, թէ հայրենիքն աղքատ է, մինչդեռ օտար երկիր կարելի է դրամ շահիլ և հանդիստ կեանք վարել:

— Կը սխալիս, պատասխանեց դաստիարակն. հայրենիք այնքան հարուստ է, որ շատ ժողովուրդներ կարէ ապրեցունել. հողն պա-

րարտ* է և արդիւնաբեր, երկիրն կու տայ
ամեն կերպ պտուղներ ու արմտիքներ*,
սարերն ու ձորեր լի են սրսական երէնե-
րով*, բիւրաւոր հաւեր ու թռչուններ ա-
մենուն քիմքը* կը պարարեն* իւրեանց հա-
մեղ ճաշակով, և ծովակներ ու գետեր կը
մատակարարեն* պէս պէս ձուկեր անթիւ
բազմութեամբ, թողլով մեղուներու անուշ
խորիսին*, կովերու իւղն ու ոչխարաց կո-
ղին* որ քաղցած մշակին երակները կը լե-
ցունեն: Այս ամեն բարիքներէ զատ, նաև
օղն է առողջարար, լերանց ու հովտաց*
զարմանազան ծաղիկներու քաղցր հոտով
բարեխառնուած, զոր մարդ ծծելով, կ'ա-
ռուգանայ, և նահապետի մը նման զօրա-
ւոր կազմուածք կ'ստանայ:

Սակայն հայ մշակն բնութեան այս ա-
մեն վայելքներն արհամարհելով, պանդըխ-
տութեան կը դիմէ. յուսով կ'երթայ, բայց
անյոյս կը կորնչի. իւր կեանք կը փճանայ
նժգեհոլութեան* տառապանաց մէջ, իւր
ընտանիք կը փճանայ մնալով անտէր ու
անպաշտպան, իւր հայրենի հողեր կը վա-
ճառուին, վաղեմի յիշատակներ կը մոռ-

ցուին, և աշխարհը ամայի կը դառնայ: Եւ այս ամեն չարեաց դիտաւոր պատճառ են տգիտութիւն և այն անդուծ վաշխառուներ որք ծանր տոկոսներով կը ճնշեն երկրագործն (¹), և սա իւր կեղեքիչներու* լուծէն ազատիլ խորհելով, անխորհրդարար կը թողու իւր հայրենի երդիքն* ու ընտանիք, և կ'երթայ հեռաւոր երկիրներու մէջ ապրիլ անմխիթար ցաւօք և հեծութեամբ:

Պանդխտութիւն թշուառութիւն է, տղայք, և նա որ իւր հայրենի հողն ու ընտանիք կը թողու և կը մտնայ, կը մեղանչէ իւր հայրենեաց դէմ, ու Հայ անուէն կ'ան պատուէ. մասնութեան հաւասար դատապարտելի և ամօթալի է այն անարգ շահամուլտութիւն, որ թոյլ կու տայ գաղթել* օտար երկիր, ընկճուելով* դոյզն դժուարութիւններէ. իսկ նոքա, որ ողւով չափ կասկուած կը մնան հայրենի երկրին, տո-

(¹) Խրիմեան Սրբազան Հայրիկ յայտնած է մեզ, թէ երբեմն մինչեւ իսկ հարիւր առ հարիւր տոկոս կը սլահանջուի:

կալով* ամեն անձկութեանց*, նորա իւր-
րեանց հայրենեաց օգտակար ու անճնուէր
ճշմարիտ զաւակներն են, արժանի անուան
իւրեանց նախահարց, որոց գերեզմաննե-
րուն մօտ կը հսկեն ու կ'աղօթեն:

Մէկ խօսքով, պանդխտութիւն սպա-
ռումն* է Հայութեան, և պէտք է փութով
առաջքն առնուլ սոյն ազգակործան չար-
եաց: Սորա համար, ամեն հայ պարտաւոր
է իւր ազգակիցները սիրել դործքով, օգ-
նել նոցա երբ պէտք ունին, ուսուցանել
նոցա խնայողութիւն, խրատել որ չթողուն
իւրեանց սեփական երկիր, և ազատել
զայնս վաշխառուներու ագահութենէն, ամ-
մենուրեք կազմելով անտեսական ընկերու-
թիւններ:

— Ուրեմն մեք երջանիկ եմք, աէր, յա-
րեց Վարդան, որովհետեւ կ'ապրիմք մեր
հայրենեաց մէջ, և կ'ուխտեմք նաեւ որ այս
երկիր պիտի լինի մեր գերեզման:

6° ԻՒՐ ԵՐԿՐԻՆ ԲԱՐԳԱԻԱՃՈՒԹԻՒՆԸ ԿԱՄԵՆԱԼ

— Բարի հայ մի, կրկնեց զաստիարակն,
ոչ միայն մայրենի երկիրը չի մոռնար, այլ
նաեւ իւր իրաւունքն է ուրիշ երկիրներու
բարգաւաճութիւնը* կամենալ, և իւր
պարսֆն է իւր երկրին բարգաւաճութիւնը
կամենալ:

— Տէր, ի՞նչ է բարգաւաճութիւնն,
հարցուց Տիգրան:

— Բարգաւաճութիւնն է ազգին խա-
ղաղութիւնն, ապահովութիւնն, յառաջ-
դիմութիւնն: Ազգն բարգաւաճ կը լինի,
երբ իւր իրաւունքներ կը պահպանուին,
երբ իւր եկեղեցիներ, վարժարաններ և
ուրիշ հաստատութիւններ* ազատ վիճակ
կ'ունենան, երբ ամեն ոք իւր ազգային
տուրքն կը վճարէ կանոնաւոր կերպիւ,
երբ ազգին մէջ ուսումն, արուեստներն ու
վաճառականութիւնը կը ծաղկին: Ազգն
այժմ աւելի բարգաւաճ է քան յիսուն տա-
րի առաջ, վասն զի կրթութիւն և զաս-
տիարակութիւն հետզհետէ աւելի կը տա-

րածուին Հայոց մէջ շնորհիւ ազգային Սահմանադրութեան*, և շնորհիւ ազգը կառավարող գլուխներուն իմաստութեան :

7° ԻՒՐ ԵՐԿՐԻՆ ՓԱՌՔԸ ԿԱՄԵՆԱԼ

— Ուրեմն, Տէր, յարեց Արշալիր, մեր կատարեալ երջանկութիւն կը վայելեմք, բաւական է զի խաղաղ կ'ապրիմք և մեր ներքին գործերով կ'զբաղիմք: Ի՞նչ փոյթ մեզ ուրիշ ազգաց վիճակն:

— Ո՛չ, տղան, ազգ մի բնաւ իրաւունք չունի իւր աստիճանն ստորնացներու: Ամեն ազգեր պէտք է ջանան իւրեանց փառքն յաւելուլ և մին զմիւս գերազանցել, ոմն իւր յազթութիւններով, ոմն իւր վաճառականութիւնով, ոմն իւր գիտութիւններով ու արուեստներով. այն ամեն ժողովուրդ, որ յառաջ չ'երթար, նա կը յետադիմէ: Յիրաւի փառք ստանալու համար պատերազմները չեն միակ և լաւագոյն միջոց. Սահակ* ու Մեսրոպ* որք Հայոց գրականութեան* ոսկեդարը* ծաղկեցուցին, աւելի փառաւորեցին իւրեանց

ազգը քան թէ ուրիշ ամեն երեւելի գործեր: Եւ մեր ազգին համար ի՞նչ գեղեցիկ միջոց վառք ստանալու, քան իւր արժանաւոր նախնեաց վարքին ու կեանքին հետեւիլ, նոցա առաքինու թեան նմանող հանդիսանալ, և երջանիկ ազգերու բախտին նախանձաւոր լինելով, ջանալ իւր ազգին պատիւը բարձրացունել ու պահպանել:

8° ԱԶԳԱՅԻՆ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

— Տէր, ըսաւ Հայկ, ի՞նչպէս կարելի է ազգային յառաջադիմութիւն, երբ հայեր ամեն կողմ ցրուած, և օտար երկիրներու մէջ անշարժ բնակութիւն հաստատած են:

— Հայրենիքէն հեռի ապրելը պատճառ մի չէ բնաւ ազգին զարգացման միոյթ չ'տանելու և զայն մտնալու: Ինչպէս ընտանեաց մէջ ամեն եղբարք, նոյնպէս բոլոր անդամք ազգին պարտին միմեանց հետ սերտ* միութիւն ունենալ. առ այս՝ պէտք է ամեն կողմ հայ լեզուն պահպանել ու մշակել, հայ զաւակներ կրթել ազգային դաստիարակութեամբ և աւանդութեամբ,

սիրել ազգին օրէնքներն ու սովորութիւններ , նպաստել ազգային ընկերութեանց , չբաժնուիլ իւր բնիկ երկրէն կամ դոնէ հայաշատ վայրերու մէջ միայն անշարժ բնակութիւն հաստատել . ահաւասիկ դեղեցիկ միջոցներ , որով ազգային եղբայրութիւնն կը մնայ միշտ անյողդողդ* , բաւական է որ մենք մեր պարտքն յարդեմք մեր շահերէն վեր , մեր ազգակիցներն սիրեմք իբր մեր իսկ ընտանիք և մայրենի երկիրն իբր մայր հասարակաց :

— Ո՛հ , այո՛ , տէր , պէտք է սիրել բոլոր մարդիկ . բայց ես երբէք պիտի չկարենամ Պարսիկը նախամեծար սիրել հայ ազգէն :

— Յոյժ օրինաւոր զգացում մի է այդ , բարեկամ : Մարդ պարտի համակրութիւն ունենալ բոլոր իւր նմանեաց համար , բայց կարելի չէ իւր ազգն հաւասար սիրել ուրիշ ազգի . մեր ազգակիցք մեր եղբայրներն են , որք մեզ հետ ունին նոյն շահեր և նոյն զգացումներ . պատմութիւն , լեզու , կրօնք , օրէնք , այսամենն զմեզ միացուցեր են նոյն անունին տակ , և եղած

եմք մի մարմին և մի հոգի: Ուրեմն մէն
մի հայու պարտաւորութիւնն է սիրել
հայութիւնն անպայման* սիրով և կա-
տարել փոքրիկ պարտականութենէն ըս-
կսեալ, մինչեւ մեծագոյն առաքինութիւնն
որ կը կոչուի դիւցազնութիւն*: Բարի հայ
մի չունի աւելի բարձր և լաւագոյն ուրա-
խութիւն, քան զգալ իւր խղճի մէջ, թէ
արժանի է ազգասէր* գեղեցիկ տիտղոսին*:

— Տէր դաստիարակ, ընդ-միջեց Գեղամ,
անցեալ օր տեսայ Փառանձեմ տիկինն, որ
մեծ բարկութեամբ կը վիճէր կաթողիկ
հայու մի հետ, որ դեռ նոր բաժնուած էր
Հայաստանեայց եկեղեցիէն. միթէ կաթո-
ղիկն հայ չէ:

— Այո՛, Գեղամ, բոլոր հայք, սրբան և
տարբեր կրօն ունենան, տարբեր լեզու խօ-
սին, տարբեր տարազ* զգենուն, տարբեր
երկիրներու վրայ ցրուած լինին, դարձեալ
եղբայր են միմեանց, և պէտք չէ բնաւ ա-
տեն զիրար, ցորչափ հայ անուն կը կրեն:
Ազգութիւնն պէտք է սիրեմք մեր հաւատ-
քին պէս. մին ամենուն համար և ամենքը
միոյն համար. այս կերպով միայն ազգա-

յին եղբայրութիւնն կը բարգաւաճի: Նոքա , որոց համար փառք է անդամ լինիլ սոյն եղբայրութեան , իրաւունք ունին իւրեանց մանկութեան ժամանակ հայրենեաց ծախքով դաստիարակուելու , իրաւունք ունին իւրեանց աղքատութեան ու ծերութեան միջոցին ազգին կողմանէ պատասպարան* և սնունդ գտնելու , իրաւունք ունին իւրեանց չափահասութեան մէջ հայու մի մեծ ու գեղեցիկ գործերովն հպարտանալու , իրաւունք ունին պարծելու և հրճուելու* ազգին պատուովը , իրաւունք ունին ամեն տեղ հայրենեաց յարգն ու համակրութիւնը վայելելու , իրաւունք ունին , երբ ազգին մեծամեծ ծառայութիւններ մատուցանելով կը մեռնին , մտածելու , թէ իւրեանց ազգակից եղբարք պիտի արտասուեն իւրեանց յիշատակն և երախտագիտական պսակներ պիտի ձօնեն* իւրեանց գերեզմանին: Ազգային եղբայրութիւնն է մխիթարութիւն ամեն հասակի և ամեն հոգիներու , կցորդութիւն սիրոյ համայն սրտերու , զոհողութիւն յօժարակամ նուիրուած յօգուտ ազգութեան :

Անշուշտ, կարի* դժուարին է ազգային եղբայրութեան պարտքեր կատարել խղճի մտօք. բայց խորհեցէ՛ք, տղայք, խորհեցէ՛ք միանգամայն, զի եթէ հայրենիք չունի բաւական վարձատրութիւն մեր անձնուիրութեանց, մեր հողին իւր դիւցազնական գործոց վսեմ լուսապսակը* կը տանի նաեւ միւս աշխարհին մէջ:

9⁰ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՌ ՕՐԷՆՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Երբ դաստիարակն իւր խօսքեր կ'աւարտէր, տեսաւ երկու աշակերտ ուրք ցանկապատէ* մի կ'անցնէին, հաւանականաբար մօտակայ պարտէզէն խնձորներ քաղելու համար:

Իսկոյն դէպ'ի այն աշակերտներուն գնաց և ձայնեց. յանցանքն գործող տղայք վերադարձան ակնկոր* և ամօթահար:

— Դուք մեր անուն դող հանել պիտի տաք, ըսաւ դաստիարակն: Շատ կը ցաւիմ որ զձեզ շրջապայութեան բերի: Չէ՞ք դիտեր ուրեմն որ բանտ կը տանին զձեզ:

— Ո՛հ, մէկ խնճորի համար, յարեց Շարայ, որ յանցաւորներէն միոյն եղբայրն էր:

— Ի՞նչ փոյթ, կրկնեց դաստիարակն. կառավարութեան օրէնքն ո՛չ միայն կը պատժէ այլոց վնաս պատճառող գործերն, այլ նաեւ փոքրիկ յանցանքներն իսկ: Զարեհ, դու վաղիւ բարի վարուց պարգեւ պիտի առնէիր, բայց կ'ուզեմ զրկել զքեզ այդ շնորհքէն:

— Ո՛հ, տէր, աղաչեցին բոլոր աշակերտք:

— Տղայք, պէտք է մանուկ հասակէն սկսեալ օրէնքներն յարգել. մանուկ մի որ կը վարժուի գողնալու, պիտի շարունակէ նաեւ, երբ չափահաս լինի: Արդ, եթէ ամեն ոք իւր ուղածին համեմատ գործէր, այն ժամանակ ամեն կողմ կը տարածուէր անիրաւութիւն և անիշխանութիւն*: Սոկրատ*, Յունաստանի իռասուռններէն* մին, անիրաւութեամբ մահուան դատապարտուեցաւ. նախամեծար համարեց մեռնիլ անմեղ, քան թէ օրինաց դէմ գործել, բանտէն փախչելով, ինչպէս իւր բարեկամք կ'առաջարկէին:

— Արդեօք շատ անդամ կրնայ պատա-

հիւ, տէր, որ օրէնքներն անարդար լինին :

— Ո՛չ, բարեկամ, մանաւանդ երբ օրէնք շինող ու գործադրող մարդիկ բարի և արդարասէր են, և ակնառութեամբ* չեն գործեր :

— Տէր, ի՞նչ կը հրամայեն օրէնք :

— Կառավարութեան օրէնքներ կը հրամայեն, որ մարդիկ չ'փլասեն բնաւ իւրեանց ընկերաց շահուն ու պատուոյն. ընկերութեան բարեկարգութիւնը չ'խանգարուի, բռնութիւններ ու անիրաւութիւններ չ'գործուին, որպէս զի մարդիկ խաղաղ ու երջանիկ ապրին և չարագործներէ հարուած չ'կրեն :

10° ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԷՆՍ

— Բայց ամեն ազգ, տէր, ունի՞ արդեօք իւր մասնաւոր օրէնքներ :

— Այո՛, ազնիւ Վահան, ամեն քաղաքակիրթ* ազգեր իւրեանց յատուկ օրէնքներն ունին, որով կը պահպանուի ազգային մութիւնն և կ'ապահովի ազգին յառաջդիմութիւն :

Գերիները և վայրենիները միայն զուրկ են օրէնքէ, վասն զի նոքա ոչ ազատութիւն ունին և ոչ խնայողութիւն: Անասունները կը յափշտակեն, կը պատառեն, կը բռնանան մին միւսին վրայ, կը դործեն ինչ որ իւրեանց ցանկութիւնը թելադրէ: Իսկ մարդիկ, երբ կը զարգանան բանականութեամբ, յայնժամ կը հասկնան, թէ ամենքն ալ հաւասար եղբայրներ են, և ունին հաւասար պարտքեր ու իրաւունքներ, յայնժամ վերջ կը դանեն զրկանք ու բռնութիւն և կը սահմանուին օրէնքներ, որպէս զի զօրաւորն չ'կարենայ ճնշել տկարին վրայ, և մին միւսին իրաւունքներ չ'յափշտակէ: Այս նպատակն ունին ամեն կառավարութեանց օրէնքներ:

Ուրեմն մարդոց ճշմարիտ ազատութիւնն է օրէնքն, և ուր օրէնք չ'կայ, անդ չ'կայ նաեւ ոչ արդարութիւն և ոչ եղբայրութիւն. օրէնքն կ'երաշխաւորէ* ամենուն իրաւունքներ, մանուկին դաստիարակութիւնը կ'ապահովէ, տառապելոյն թշուառութիւնը կ'սփոփէ, զրկելոյն արդարութիւնն կը հաստատէ. օրէնքն ժողովուրդին

յառաջդիմութեան աստիճանն է, զի սրչափ ժողովուրդն լուսաւորուի իմացականութեամբ, նոյնչափ փոփոխութիւն կը կրեն իւր պէտքեր, և նոյնչափ իւր օրէնքներ կը կատարելագործուին. ՚ի մի բան, օրէնքն իւրաքանչիւր ազգի զօրութիւնն է, որով կը ծնանի միութիւն ազգին բոլոր անդամոց մէջ:

— Ո՛հ, ի՛նչ դեղեցիկ է ուրեմն, տէր, յարեց Վահան, որ ազգ մի լաւ օրէնքներ ունենայ և մտադիւր* հնազանդի օրինաց: Կ'երգնում, որ իմ ընկերներէս ո՛չ ոք պիտի գտնուի որ ազգային օրէնքն արհամարհէ:

— Բայց գիտե՞ս արդեօք, Վահան, ի՛նչ է ազգային օրէնքն... լութիւնը շատ անգամ նշան է տգիտութեան. ուրեմն նախ պէտք է գիտնալ, թէ ազգային օրէնքն է Սահմանադրութիւն, որոյ համեմատ Ազգն ինքնին կը հողայ իւր ներքին գործեր: Ժողովուրդը կ'ընտրէ երեսփոխաններ, և սոքա միանալով, ազգին ընդհանուր ժողովը կը կազմեն և կ'ընտրեն ազգին պատրիարքն ու վարչութիւնը* որոց պարտականութիւնն է օրէնքներն գործադրել և բոլոր հանրային

դործոց ուղղութիւնն տալ: Ուրեմն ամեն ինչ որ կը հրամայէ մեզ ազգային օրէնք, մեր պարտքն է կատարել: Նա որ չ'ուզեր հնազանդիլ ազգային օրինաց, կը մեղանչէ ազգին դէմ և արժանի չէ հայ անուան:

— Սակայն, աէր, ընդամիջեց Հրազդան, մին երկցազոյն աշակերտներէն, ազգին բոլոր օրէնքներն հաւասարապէս անթերի՞ են միթէ, և չկան բնաւ փոփոխելի կամ վնասակար օրէնքներ, որոց հնազանդելու պարտք չունենամք:

— Սաուզիւ, բարեկամ, ամեն օրէնք չկարէ կատարեալ լինել. բայց այս պատճառ մի չէ, որ հնազանդելու պարտքէ ազատ լինիմք. գոնէ կարեմ վստահեցունել զձեզ, թէ ազգն չունի երբէք օրէնք մի, որ հրամայէ չարն ու արգելու բարին: Եթէ դիպուածով իսկ օրէնք մը փոփոխելի կամ վնասակար լինի, ազգն կը փութայ փոխել զայն, իւր կողմանէ ընտրուած երեսփոխանաց ժողովոյն ձեռամբ. բազում անձինք դժուարաւ կը խաբուին քան թէ միակ անձ մի. ազգն իւր աչեր յառած է իւր երեսփոխանաց վրայ, որք կ'աշխատին

Ժողովրդեան շահուց համաձայն լաւագոյն
օրէնքներով գործելու :

11° ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔ

— Այժմ, պէտք է խօսիմ ձեզ, բարե-
կամք, թէ ինչ է ազգային տուրք և թէ
ինչ համեմատութեամբ* իւրաքանչիւր ոք
պարտի հատուցանել :

— Բայց, աէր, յարեց Արամ, կարծեմ
թէ առ այժմ պէտք չունիմք տուրքի վրայ
խորհելու. դեռ փոքրիկ եմք, և մեր հայ-
րեր կը հատուցանեն զայն : Երբ մեծնամք
և գործի աէր ըլլամք, այն ժամանակ թող
մեզ ներկայանայ հաւաքիչն և իսկոյն պիտի
հատուցանեմք :

— Ի՞նչպէս, Արամ, միթէ՞ մանկութե-
նէ պէտք չէ սկսիմք ամեն բան ուսանիլ :
Սակայն գոնէ կը խօստովանիս թէ ամեն
ոք ՚ի հարկէ պարտաւոր է նպաստել ազ-
գային ծախուց :

— Այո՛, աէր :

— Լա՛ւ ուրեմն. ազգն ունի և պէտք է
ունենայ եկեղեցիներ, պաշտօնեայներ,

վարժարաններ , հիւանդանոցներ , մատենադարաններ որոց ծախքերն հոգալու համար դրամի կը կարօտի : Դրամն է ամեն գործի կենսական ջիղն , և առանց դրամի ժողովուրդ մի երբէք չէ կարող յառաջադիմել : Ազգ մի որ իւր բարոյական զօրութեան հետ կը միացունէ նաեւ նիւթական հարստութիւն , ստուգիւ այն ազգն է երջանիկն աշխարհի բոլոր ազգերէն , գիտութիւնք և արուեստք հսկայաքայլ կը զարգանան այն ազգին մէջ , վաճառականութիւնն կը ծաղկի , թշուառութիւնն կը նուաղի , և համբաւն ամեն կողմ կը տարածուի . թշնամիք կը պատկառին նորա երեսէն , և անդորրութիւն* կը տիրէ ազգին մէջ : Ուրեմն ամեն հայ պէ՛տ է յօժարակամ հասուցանէ իւր ազգային տուրքերը , նոյն խակ ազգին վառայ համար . խօսքէ աւելի գործքով մանաւանդ պէտք է սիրեմք ազգն , եթէ կը փափաքիմք օժանդակել* նորա պէտքերուն :

— Իրաւունք ունիք , տէ՛ր , յարեց Տիգրան . առանց դրամի ո՛չ տուն կը կառավարուի և ո՛չ ազգ . բայց ի՞նչպէս կարելի է

որ ամեն մարդ հաւասար տուրք վճարէ .
միթէ՞ մեծ անիրաւութիւնն չէ աղքատէն և
հարուստէն մի և նոյն չափով տուրք պահանջել :

— Այո՛ , մեծ անիրաւութիւնն է , Տիգրան , և օրէնքն այդ մասին կատարելապէս արդար է , վասն զի իւրաքանչիւրէն կը պահանջէ իւր կարողութեան համեմատութեամբ . աղքատիկ ընտանեաց հայր մի որ զաւակներ ունի անուցանելու և օրական աշխատութեամբ կ'ապրի , չկարէ հատուցանել հաւասար այն մեծատունին որ եկամուտներու տէր է և ճոխութեամբ կ'ապրի :

Մեծատունք պարտաւոր են իւրեանց պարտքէն աւելին գործել և երբէք իւրեանց հարստութիւնն չ'ինայել ազգին . աղքատեացներ իւրեանց ճոխութիւնն կը վատնեն շռայլութեամբ և զեղխութեամբ* , այլ հայրենասէր մեծատունք ազգին փառաց մէջ միայն կը տեսնեն իւրեանց ճշմարիտ փառքն ու մեծութիւնն . կեանքն առաքինութեամբ կը չափուի և ոչ թէ առօրեայ հաճոյքներով , և ի՞նչ աւելի գեղեցիկ կեանք կարէ լինել , քան իւր արդար վաստակոց

պտուղներով սատարել* ազգին պիտոյից, վարժարաններ ու արուեստանոցներ հիմնել, որբանոցներ ու հիւանդանոցներ հաստատել, աղքատիկ գիւղերու կրթութեան հոգն ստանձնել*, նիւթական օժանդակութեամբ արուեստներն ու դպրութիւններն քաջալերել, և միշտ պատրաստ լինել դժբաղդութեանց ժամանակ լիարուռն* նուիրելու իւր դրամ: Ահաւասիկ մեծատանց անկորուստ փառքն. ահաւասիկ յաւիտենական յիշատակարանն* մեծատանց անձնուիրութեան, որով միայն կարող են իւրեանց անուն անմահացունել և կոչուիլ քարերաբ ազգին:

12^o Պ Ա Ր Տ Ք Ք ՈՒ Է Ա Ր Կ ՈՒ Թ Ե Ա Ն

Դաստիարակն փոքր մի շունչ առնելով, իւր սանունք գոհ սրտիւ սկսան իւրեանց պտոյտ շարունակել: Մի քանի վայրկեան յետոյ, տասնի չափ ընկերներ հետաքրքրութեամբ շրջապատեցին փոքրիկ ու դեղեցիկ Արայն, որոյ ձեռաց մէջ պաշտօնական կնիք կրող թուղթ մի կը տեսնուէր:

Դաստիարակը նշմարեց զայն, և մօտե-
նալով, հարցուց Արայի, թէ ի՞նչ էր այն
թուղթ:

— Տէր, պատասխանեց Արայ, սոյն նա-
մակն անցեալ երեկոյ հայրս տուաւ ինձ
կարդալու, և ես տակաւին զայն մտոցեր
եմ դրպանիս մէջ:

— Այս թուղթ, կրկնեց դաստիարակն,
ուշադիր ականարկ մի ձգելով, Արայի հօրն
ուղղեալ մի պաշտօնագիր* է, որ կը յայտ-
նէ թէ յառաջիկայ կիւրակէ Թաղական Խոր-
հըրդոյ ֆուէարկութիւն պիտի կատարուի:

Անշուշտ ամենքդ ալ լսած էք քուէարկու-
թիւնն բառն, բայց գուցէ դեռ ևս որոշ գա-
ղափար մի չունիք. ուրեմն միտ դրէք որ
բացատրեմ ձեզ համառօտիւ: Ազգային օ-
րինաց համեմատ, ժողովուրդն իրաւունք
ունի ինքնին իւր ձեռքով ընտրելու իւր ժո-
ղովներն ու Խորհուրդներ*, որոց պաշտօնն
է ազգին գործերն հոգալ և նորա յառաջ-
դիմութեան աշխատիլ: Ամեն հայ, որ ազ-
գային տուրք կը վճարէ, ոչ միայն իւր ի-
րաւունքն է, այլ նաեւ իւր պարտքն է ընտ-
րող* լինիլ և քուէ տալ. այս պարտակա

նութիւն՝ իւրաքանչիւր հայ անհատի փութարկութեան պարսփն է :

— Կարելի՞ է սակայն պարտազանցութիւն համարել, տէր, ազգային դործերէ հեռանալ և քուէարկութեան չ՝ մասնակցիլ :

— Ս, յո՛, Վահրամ՝, մեծ յանցանք ու երբեմն մինչև իսկ մեծ ոճիր* է անհոգութեամբ կամ անտարբերութեամբ ձեռնպահ* մնալ քուէարկութենէ, և իւր ազգին կացութեան փոյթ չ՝ տանիլ. եթէ ամեն մարդիկ հեռանան ազգային դործերէ, ո՛ւր կ'երթայ ազգին վիճակն ու պատիւ : Մեր պարտքն է ուրեմն ոչ միայն քուէ տալ, այլ մանաւանդ բարի, խոհեմ, և ազգատէր անձանց միայն քուէ տալ, առանց շահախնդիր մարդոց հրապոյրներէն խաբուելու :

Բայց ազգին կողմանէ ընտրուած ժողովական կամ խորհրդական անձինք ևս ունին նուիրական պարտականութիւն, զոր պարտին կատարել խղճի մտօք. իւրեանց անձնուիրութենէն ու իմաստութենէն կախումն ունի ազգին բախտն. ուստի պարտին հասարակաց բարւոյն համար զոհել իւրեանց անձնական կիրքն ու շահն, աւելի

խորհրդածելով*, քան թէ վիճելով :

— Իրաւունք ունիք, տէր, բայց մեր տունն եկած լրագիրներ կը պատմեն, թէ ամեն անգամ մեծ վէճեր ու կռիւներ տեղի կ'ունենան Պօլսոյ Երեսփոխանական* Ժողովին մէջ, որ հայոց ամենէն մեծ ժողովն է, ինչպէս պատմեցիք մեզ առաջ :

— Արդարեւ, վահրամ, երեսփոխանք իրաւունք չունին կռուելու և անձնական վէճերով զբաղելու. մեզ համար խաղաղութիւն և միաբանութիւն պէտք է, և ոչ թէ աղմուկ ու շփոթութիւն. բայց այդպիսի դէպքեր շատ նուազ կը պատահին ժողովներու մէջ, և չունին այնքան միասակար հետեւանքներ, որչափ կը կարծուին. Պէտք է արդիւնքին նայիլ, ոչ թէ աղաղակներուն, որ կ'անցնին և կը խաղաղին :

13° ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

— Բայց չ'մոռնամ յայտնելու ձեզ, բարեկամք, թէ ազգին ծառայելու համար բաւական չէ միայն ազգային պաշտօններ վարել և ազգային տրոց մասնակցիլ, այլ

պէտք է նաեւ 'ի դործ դնել այն ամեն միջոցներ որոց պէտք ունի ազգն :

— Եւ ի՞նչ միջոցներ կան տակաւին, տէր, պատասխանեց Տիգրան, զոր ձեր յատուկ փորձառութեամբ օգտակար կը համարիք ազգին :

— Ամեն ազգերու երջանկութեան միակ արդիւնաւէտ միջոցը, զոր ես կը խորհիմ, աղայք, ընկերակցութեան ոգին է, այն բարերար ոգին, որ ետութեան կիրքերն կը խաղաղեցունէ, անձնական շահերն կը հաշտեցունէ, և անհատներու աննշան ոյժերն միացունելով, կը կազմէ մի այնպիսի հաւաքական ոյժ, որոյ դէմ ոչ մի խոչընդոտ* կարող է մաքառիլ* : Ընկերակցութեամբ կը դիւրանան դժուարագոյն դործեր . . . :

— Տէր, յարեց Արամ, կը պատմեն թէ հայոց մեծագոյն ընկերութիւնն է Միացեալ-Ընկերութիւնն*, որ ձրի դպրոցներ կը բանայ հայաբնակ գաւառաց մէջ և աղքատ դիւղերն անգամ ուսում և կրթութիւն կը տարածէ. միթէ՞ ամենէն օգտակար ընկերութիւնը չէ այն :

— Այո՛, Արամ, Միացեալ-Ընկերութիւնն

ազգին ամենէն օգտակար ընկերութիւնն է, որով հայ մի կարէ պարծենալ օտարներու առջեւ. ազգասէր անձինք են այդ ընկերութեան անդամներ, որք անձնուիրաբար կ'աշխատին՝ ազգին կարօտ զաւակները կրթելու, և արժանի են ազգային երախտագիտութեան:


— Բայց ինչ օգուտ, յարեց Վահրամ, եթէ ազգը չունի ուրիշ ընկերութիւն, և իւր բոլոր յոյս դրած է միայն Միացեալ-Ընկերութեան վրայ:

— Ո՛չ, բարեկամ, ազգը զուրկ չէ նաեւ ուրիշ կարեւոր ընկերութիւններէ. Ազգանուէր-Հայուհեաց Ընկերութիւնն*, ազնիւ ու մեղուաջան* հայ տիկիներէ և օրիորդներէ բաղկացեալ, կը դործէ նոյնպէս հայաբնակ դաւառաց մէջ, նպատակ ունենալով օրիորդաց վարժարաններու յառաջդիմութիւնն: Սոյն երկու մեծ ընկերութիւններէն զատ, կան ուրիշ զանազան ընկերութիւնք, որք մեծ եռանդով կ'աշխատին ազգային դաստիարակութեան դործով:

Բայց միայն կրթական ընկերութիւնք բաւական չեն ազգին բոլոր պիտոյից գոհա-

ցում տալու. ոչ միայն ապագայ՝ այլ նաև ներկայ սերունդն ևս պէտք է մտածել, ներկայ սերունդն՝ որ թշուառութեան մէջ կը հիւծի* և կը տուայտի*. պէտք է քաղաքներու և գիւղերու մէջ հաստատել սնտեասկան ընկերութիւններ, որք փոխ տան կարօտ գործաւորներու. ինւայոդական արկղներ, ուր յետին աշխատաւորն իսկ կարենայ իւր խնայած լումայն* ՚ի պահ գըներէ. փոխադարձ օգնութեան ընկերութիւններ, որով մշակն ու գործաւոր կարեն օգնութիւն ընդունիլ իւրեանց հիւանդութեան կամ անգործութեան ժամանակ. գործակցական ընկերութիւններ, որով ազքատ արուեստաւորք կը միանան և փոքրիկ գումարներէ կազմելով մի մեծ գումար, կարող կը լինին աժան ապրուստ հայթայթել: Սյսպիսի օգտակար ու շահաւէտ ընկերութիւններ պէտք է հիմնել ամեն կողմ. պէտք է ընկերակցութեան օգուտն հասկըցունել գեղջուկներուն ու գործաւորներուն, և միանգամայն բացատրել թէ նախասեստութիւնն* ամենամեծ առաքինութիւնն է, որով մարդիկ կանխաւ գուշա-

կելով ապագայ չարիքն, կամ փափաքելով
աւելի լաւագոյն վիճակի, իւրեանց փոք-
րիկ ոյժեր կը միացունեն, փող փողի* քով
կը բերեն, և զանազան ընկերակցութիւն-
ներ կազմելով, կը ջանան թշուառութենէ
ազատիլ, և երջանիկ լինիլ: Միութիւնը
զօրութիւն է, և այն ժողովուրդք որք կը
գործեն ընկերական միութեամբ, կարօտ
չեն ոչ հացի, ոչ գրամի և ոչ ուսման:



Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ո Ի Թ Ի Ի Ն

1⁰ Նախապաշարմունք, ինչպէս թռչուններու
ազդեցութեան, երազահաններու, հմայեակնե-
րու, եւ այլն, հաւատք ընծայելը, վայելուչ չէ
լուսաւորեալ անձանց համար:

2⁰ Պէտք է սիրել հայրենիքն, վասն զի Նա
մեծ ընտանիքն է, որոյ զաւակներն են ամեն
Հայք:

3⁰ Պէտք է սիրել իւր կամ իւր նախնեաց
հայրենիքն կամ ծննդավայրն, վասն զի կը սր-
բունակէ մեր նախահարց աշխատութիւններն
ու գործեր:

4^o Պէտք է մեծարել հայրենի երկրին յիշատակներն, վասն զի նոքա մեր հայրենական ժառանգութիւնն են :

5^o Պանդխտութիւնն է, եւ քննադատութիւնն է ազգին օգտին . ճշմարիտ հայրենասէրն ոչ երբէք իւր հայրենիքն կը լքանէ շահամոլութեամբ կամ վհատութեամբ* :

6^o Ամեն անձի պարտքն է իւր երկրին բարգաւաճման ցանկալ, որ է ազգին խաղաղութիւնն, ապահովութիւնն, յառաջդիմութիւնն :

7^o Ազգ մի պարտաւոր է իւր փառքն պահել միշտ եւ բարձրացունել, նախանձաւոր լինելով երջանիկ ազգերու բախտին :

8^o Ամեն հայք անխտիր եղբայր են միմեանց եւ ազգային եղբայրութիւնն կը պահանջէ անձնութիւնն առ ազգն :

9^o Կառավարութեան օրէնքն կը հրամայէ, որ մարդիկ յարգեն իւրեանց ընկերաց պատիւն ու կեանքն, եւ չ'վնասեն միմեանց շահուն եւ ընկերական բարեկարգութեան :

10^o Ազգային օրէնքն է Սահմանադրութիւնն, որ ազգին կողմանէ յօրինուած լինելով, ամեն հայ պարտաւոր է հնազանդիչ նոյն օրինաց :

11^o Ազգին շահը կը պահանջէ, որ իւրաքանչիւր հայ անհատ իւր բաժնին յատկացեալ ազգային տնտեսական հաստուցանէ յօժարակամ . առանց դրամի չէ կարելի յառաջդիմութիւնն :

12° Ազգային օրինաց համեմատ , ժողովուրդն իրաւունք ունի ինքնին ընտրելու իւր ժողովականները , խորհրդականներն ու իւր պետերն . սոյն իրաւունքն իւրաքանչիւր հայու քուարկուրեան պարսֆն է :

13° Ամեն հայ պարտաւոր է օգնել ազգային ընկերութեանց . որովհետեւ ազգին համար յոյժ օգտակար է ընկերակցութիւնն :

Հ Ր Ս . Հ Ս . Ն Պ .

1° Պէտք է հաւատք ընծայել երազահաններու , թռչուններու , ծառերու , խոտերու , յուսուժներու գերբնական ազդեցութեանց : — Պատմէ այս կերպ աւելորդապաշտութեան* օրինակներ , ցոյց տալով նոցա այլանդակութիւնն* : — Սոյն նախապաշարմանց տեղ ինչ պէտք է ընդունիլ : — Ի՞նչ է նախապաշարումն :

2° Ի՞նչու պէտք է սիրել հայրենիքն : — Ի՞նչ նմանութիւն կարելի է տալ հայրենեաց :

3° Նախամեծար կը համարլ՞ս միթէ ուրիշ երկիր բնակիլ , քան թէ հայրենեաց մէջ :

4° Ինչո՞ւ պէտք է հայրենեաց վրայ անցեալ դարերէ ի վեր մնացած յիշատակարանները

պահպանել: — Ո՞յք են դէլսաւոր յիշատակարանք քո բնակած քաղաքին կամ երկրին: — Ո՞յք են այն մեծ մարդերն որովք կը պարծի ազգն:

5⁰ Ի՞նչ է պսակոյսոսրիւնն, եւ ի՞նչ վաստակար հետեւանքներ ունի: — Հայրենեաց աղքատութիւնն կարելի՞ է պատճառ համարիլ պանդխտութեան: — Բացատրէ վաշխառուներու տուած նեղութիւններն: — Ո՞յք են ազգին ճշմարիտ գաւակները:

6⁰ Ազգն ի՞նչպէս աւելի բարգաւաճ է այժմ քան նախընթաց ժամանակներու մէջ: — Յոյց տուր նախկին հալածեալ վիճակն եւ արդի հանդարտ վիճակն: — Բացատրէ կատարուած յառաջդիմութիւններն:

7⁰ Ի՞նչ բանի մէջ կը կայանայ ազգին փառքն: — Ճշմարիտ է ըսել, թէ « երջանիկ ժողովուրդներ նոքա են, որք պատմութիւն չունին »:

8⁰ Ի՞նչպէս կը կազմուի ազգային եղբայրութիւնն: — Մեկնէ սոյն առածն, « մին ամենուն համար, եւ ամենը միոյն համար »: — Մարդկային զգացումներ միթէ կ'արգելուն զմեզ մեր ազգն ուրիշներէ աւելի սիրելու:

9⁰ Ի՞նչու պարտիմք հնազանդիչ կառավարութեան օրինաց: — Կարելի՞ է որ ամեն ոք իւր քմաց համեմատ գործէ:


10⁰ Ի՞նչ է ազգային օրհնքն: — Ի՞նչու պարտիմք հնազանդիչ ազգային օրինաց: — Բացատ-

րէ թէ ճշմարիտ ազատութիւնն ի՞նչ բանի մէջ
կը կայանայ :

11⁰ Կարելի՞ է սիրել իւր ազգն առանց նիւ-
թապէս օգնելու ազգին : — Ամեն հայ անհատ
պարտաւոր է ազգային տուրք վճարելու : — Ի՞նչ
համեմատութեամբ կը սահանջուի իւրաքանչիւ-
րէն : — Բացատրէ ինձ օրինակներով, թէ ո՞րք
են քարերարք ազգին :

12⁰ Ի՞նչպէս կ'ընտրուին ազգին առաջնորդք,
Ժողովք եւ խորհուրդք : — Քուէարկութեան
պարսֆն ընդհանուր է թէ ոչ : — Ո՞րպիտի ան-
ձանց պէտք է քուէ տալ : — Բնտրեալ անձինք
չունին պարտականութիւն :

13⁰ Պատմէ ընկերակցութեան օգուտներն,
օրինակներով հանդերձ : — Ո՞րք են ազգային
գլխաւոր ընկերութիւնք :



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Գ Լ Ո Ւ Խ Ա. — Պ Ա Ր Տ Ք Ա Ռ Ա Ն Ձ Ն

1^o ՄԻ՛ ԱՆԲԱՐԵՆԱՌՆՈՒԹԻՒՆ

Շրջագայութենէ վերադառնալով, մանուկներն իւրեանց դաստիարակին շուրջ համախմբած, զուարթութեամբ կ'ուղեւորէին, երբ պատահեցան մի թշուառ արբեալի, որ կ'երթար երգելով և մէկ փոսէն միւսն գայթ ի գայթ* տատանելով* :

— Ո՛հ, աէր, ի՛նչ աղեղ բան է այսպէս արբենալ, դուչեց Շարայ: Դիտեցէք ուրեմն այս մարդ, ի՛նչպէս աչերն ուռեր ու կարմրեր են, ի՛նչպէս կեղտոտ ու աղտոտ է մարմնոյն բոլոր կողմն, ի՛նչ դազանի կերպարան ունի. անասուններէն իսկ ստորին է, որովհետեւ նոքա իւրեանց պէտքէն աւելի ոչ կ'ուտեն և ոչ կ'ըմպեն:

— Այժմ կը հասկնաս ուրեմն, թէ ինչո՞ւ հին Յունաստանի Սպարտայիք արբեցութեան միակ դարման կը համարէին արբեալի մի տեսարանն: Նոյնպէս, տղայք, անբարեխառնութեան* ամեն ձեւերն հաւասարապէս ամօթալի են. շատ ուտել կամ ուտել ազահութեամբ և չափազանց հաճոյքով, գոհացունելու համար ո՛չ թէ քաղցն, այլ որկրամոլութիւնն*, նոյնքան տգեղ պակասութիւն է: Մարդ պէտք է ուտէ և ըմպէ ապրելու համար, և ոչ թէ ապրի ըմպելու և ուտելու համար:

Այն ինչ կ'աւարտէր ուսուցիչն իւր խօսքերը, արբշիւռ* կորսնցուց իւր հաւասարակշռութիւն*, և գլորելով գնաց դուրսը քարի մի զարկաւ. արիւնն ցայտեց, և աշակերտք տեսնելով, խփոյն խուժեցին* դէպ ՚ի մարդն:

— Բա՛, թողունք զինքն, ըսաւ Վրոյր. լաւ եղաւ իրեն. պէտք չէր այնչափ խմել:

— Բարեսիրտ անձի լեզու չէ այդ, Վրոյր, պատասխանեց դաստիարակն, որ ինքն ալ մօտեցած էր անկենդան մարմնոյն. երբ մարդ մի վշտակրութեան մէջ է, պէտք է

մոռնալ ամեն բան և միայն դժուրեան
անսալ :

Տղայոց մին աճապարանօք գնաց շուր
բերաւ իւր դաւաթով և նորա երեսը
լուաց : Մարդն ընդ երկար մնաց նուազեալ :
Վերջապէս բացաւ իւր աչքն, և նշմարելով
իւր շուրջ եղող անձերն, սկսաւ լալ : Յաւն
սթափեցուցած * էր զայն : Ծածկեց գէմքն
իւր ձեռներով և գոչեց. « Հեռացէք հեռա-
ցէք, արժանի չեմ որ ինձ հոգ տանիք » :

2° ՄԻ՛ ԾՈՒԼՈՒԹԻՒՆ

Ուսուցիչն ուղեց զայն քաջալերել, եւ
հարցուց թէ շատ ցաւ չէ՞ր զգար :

— Ի՛նչ փոյթ, պատասխանեց մարդն, որ
դորձաւորի զգեստ հագած էր, հին ու կեղ-
տոտ. իմ պատիժս է այս : Ա՛հ, տղայք,
յարեց հեծկլտալով, ահաւասիկ ո՛ւր կը տա-
նի ծուլութիւնն :

Շատ իրաւամբ կոչուած է այն՝ մայր ա-
մենայն մոլութեանց. եթէ ծոյլ չ՛լինէի,
տակաւին ազարակատէր էի հօրս թողած
ժառանգութեան մէջ, Բայց չուղեցի աշխա-

տիլ և յողնիլ. սախալուեցայ մեր ադարակն
ու դաշտեր դրաւ * դնել և յետոյ վաճա-
ռել. սպառեցի ամեն գոյք * և դրամ , եւ
այլոց մօտ ծառայութեան մտայ : Երբ մի-
անգամ մարդ դատարկութեան համն առ-
նու , ամեն ինչ հետզհետէ կը վատթարա-
նայ * : Ամեն կողմ մերժեցին զիս , և ես սո-
վորեցայ դասարկաբոյիկ կեանք վարել ,
նօթութենէ * չմեռնելու համար մերթ ընդ
մերթ աշխատելով : Այս ամենուն հետ նաև
վատ ընկերակցութիւնք և սրտիս ցաւերը
փարատելու պէտքն տակաւ զիս մղեցին
արբեցութեան : Շարաթական վարձքս վատ-
նեցի , և երկու օր դործի չերթալով , զիս
ի բաց արձակեցին : Չունէի համարձակու-
թիւն եղբարցս դիմելու , վասն զի արհա-
մարհած էի նոցա ամեն խորհուրդներ . դի-
չերն ու ցերեկն կապելանոցներու * մէջ ան-
ցուցի , և այս է պատճառն , որ այժմ այս
վիճակի մէջ կը տեսնէք զիս : Նոյն իսկ բան
մի չունիմ վաղուան սւտելու :

Ո՛րչափ և յանցաւոր էր , թշուառն իւր
վրայ կարեկցութիւն կը շարժէր . ուսուցիչն
տուաւ մի քանի դահեկան , իւր կողմէն եւ

աչակերտաց կողմէն . յորդորեց զինքն բարի խրատներով , և վերատին ձեռք առին Վանայ արեւելեան ճանապարհն :

3^o ՄԻ՛ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ , ՄԻ՛ ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Արկածներու օրն էր այն օր , վասն զի մի քանի վայրկեան յետոյ , կռուոյ ազմուկ մի լսուեցաւ Վրոյրի և Հրանտի մէջ , որք ետ մնացած էին իւրեանց ընկերներէն :

— Բան մի չ'տուի այն մարդուն , վասն զի չ'ուզեցի , կ'ըսէր Վրոյր :

— Վասն զի ոչինչ ունէիր գրպանիդ մէջ , կը յարէր Հրանտ հեզներով* . կը կարծես ուրեմն , թէ մեք չեմք զխտեր որ դուն աղքատ ես :

— Բայց ոչ քենէ աւելի :

— Ե՛ս , ես հարուստ եմ , իմ հայրս երկու տուն ունի մեծ այգիներով հանդերձ : Իսկ դո՛ւ , դու այն մարդուն որդին ես , որ բեռնակրութենէ զատ չունի ուրիշ տարուստ :

Դաստիարակն հազիւ բացաւ բերանն յանդիմանելու համար սոյն ծաղրելի սնապար-

ծուծիւնն*, բայց վրոյր կանխեց*, բռնցի* հարուած մի տուաւ Հրանտի երեսին, որ նոյնպէս պարտաւորեցաւ փոխադարձն հատուցանել, թէպէտ նուազ յաջողութեամբ, Ընկերք վաղեցին և զայնս բաժնեցին:

Իստտիարակը բարկացաւ:

— Շատ վատ գաղափար կու տաք ինձ ձեր բնաւորութեան վրայ, դոչեց: Այս ծիծաղելի կռուոյն մէջ, երկուքդ ալ հաւասարապէս յանցաւոր էք. հպարտութիւնն յիմարական է, բարկութիւնն գաղանական. չէք կարող անշուշտ միմեանց վրայ նախանձիլ: Այսպիսի դէպքի մէջ, պատիժներն արդիւնք չունին. կ'ուզեմ խելքով համոզել զձեզ՝ ձեր անիրաւութիւնն ճանչնալու:

Տեսնեմք, Հրանտ, ի՞նչպէս չ'զլտես, որ դուք ամենքդ հաւասար էք աստ, դպրոցին մէջ՝ աշխատութեան եւ կանոնապահութեան առջեւ, ինչպէս ամենքդ հաւասար էք կենաց մէջ՝ բնութեան և օրէնքի առջեւ: Նա որ աւելի տաղանդ* և աւելի առաքինութիւն ունի, նա է միակ բարձրագոյնն, և այնպիսին, հաւատացէք, բնաւ հպարտութիւն չունի: Նա պարկեշտ է ընդ-

հակառակն, եւ չ'ուզեր երբէք ինք զինք
բարձրացունել, վասն զի կ'զգայ թէ տա-
կաւ ին ունի պակասութիւն:

Բարկութեան դալով, վրոյր, նա զմարդ-
կը խոնարհեցունէ 'ի կարգ անբանից. ցաս-
կատ * մարդ մի կը նմանի ահարկու ցուլի *
կամ կատաղի անասնոյ, վասն զի կը կոր-
սնցունէ իւր բանականութիւն: Համբերու-
թիւն, հեղութիւն, չափաւորութիւն պարտ-
քեր են նոյնչափ նուիրական, որչափ այն
պարտքերն որոց համար նոյն իսկ մեք մեր
անձին պատասխանատու եմք:

4° Պ Ա Ր Տ Ք Ա Ռ Ա Ն Ձ Ն

— Ուրեմն, տէր, մեք մեր անձին նկատ-
մամբ ունիմք պարտքեր, հարցուց Գեղամ:

— Անտարակոյս. մարդ, իւր սրտով,
իւր մտքով, իւր բանականութեամբ, և իւր
հոգւով, ունի արժանապատիւն մի,
զոր պարտաւոր է պահպանել. թերանալ
սոյն պարտուց մէջ՝ անպատուել է մարդ-
կութեան յարգն մեր անձին վրայ:

— Ո՞ք են այդ անձնական պարտքեր:

— Մեր այս առուր շրջագայութիւնն արդէն առիթ տուաւ մեզ նոցա մի քանին նշանակելու, ինչպէս՝ բարեխառնութիւն, աւխասութիւն, համեսութիւն, չափաւորութիւն: Ուրիշ պարտքեր եւս կան, որ կը պատկանին* մարդոյն բնաւորութեան, սրտին, և հոգւոյն:


Ամեն բանէ առաջ, պարտիւք լինիլ բարի, գթած, անձնուէր, համակարիք* մեր նմանեաց երջանկութեան եւ թշուառութեան: Առանց բարութեան, չկայ բնաւ ճշմարիտ արժանիք:

Յետոյ, պարտիւք սիրել նամարսութիւն, միշտ ճշմարիտ խօսիլ, անկեղծութիւն ունենալ. սուան ագեղ է, ինչպէս ըսինք անցեալ դասերուն մէջ, եւ դուք արդէն այնքան լաւ կ'զգաք զայս, որ պէտք չեմ համարիր բացատրել ձեզ վերստին:

Պարտիւք վերջապէս քաջութիւն ցոյց տալ վտանգաց և վշտաց մէջ. բնաւորութեան տկարութիւն և վատութիւն՝ ամօթալի իրեր են. վեհ հոգի կրող անձինք կ'ունենան նաև սիրտ անվեհեր:

Առանց սոյն երեք առաքինութեանց՝

բարութիւն, անկեղծութիւն , փաշտութիւն ,
ոչ ոք կարող է լաւ մարդ լինիլ, և նոյն իսկ
մարդ լինիլ :



Հ Ա Մ Ս Ռ Օ Տ Ո Ի Թ Ի Ի Ն

1° Անբարեխառնութիւնն անասունէ աւելի կը
նուաստացունէ զմարդ :

2° Ծուրութիւնն կ'առաջնորդէ զմարդ ամեն
մոլութեանց :

3° Հպարտութիւնն անմտութիւն է , վասն զի
մարդիկ հաւասար են բնութեան եւ օրինաց
առջեւ , բայ 'ի տաղանդի եւ առաքինութեան
գերադասութեան : — Բարկութիւնն զմարդ կը
նմանեցունէ անասնոյ :

4° Պարտքեր ունիմք մեր անձին , վասն զի
պարտաւորեալ եմք մեր անձին վրայ յարգել
մարդկային բնութեան արժանապատւութիւնն :
Սոյն պարտքեր կը բովանդակին երեք բառի
մէջ , բարութիւն , անկեղծութիւն , փաշտութիւն :

Հ Ր Ա Հ Ա Ն Պ


1° Ինչո՞ւ անբարեխառնութիւնն աւելի ամօ-
թալի կը համարուի , քան թէ առողջապահու-

քեան հակառակ եղող ուրիշ չափազանցութիւնք,
ինչպէս է, օրինակի համար, աշխատութեան
չափազանցութիւնն:

2° Ինչո՞ւ ընկերութիւնն այնքան խիստ կը
վարուի դատարկաշրջիկներու դէմ: Ի՞նչ է
բուն դատարկաշրջիկն: — Հարուստք ի՞նչպէս
կրնան օգտակար լինել ընկերութեան, առանց
ինքնին իսկ աշխատելու: — Ուրիշներն աշ-
խատցունելն աշխատիլ չէ՞ միթէ:

3° Բացատրէ հպարտութեան անմտութիւնն,
պատմելով առակն, կաղնիք* եւ եղէգն*, եւ
ցոյց տուր բարկութեան վտանգներն, յիշելով
որ մեղուն կը մեռնի, կորուսանելով իւր խայ-
թոցն*, զոր կը թողու իւր տուած վէրքին մէջ:

4° Բացատրէ թէ ի՞նչպէս կարելի է ունենալ
պարսֆ առ մեր անձն: Ցոյց տուր թէ սոյն բո-
լոր պարտքեր կը պարունակուին մարդկային
անձն յարգելու մէջ. ի՞նչ կը նշանակէ սոյն
խօսքն: — Մարդկային սեռի մեծութիւնն ու
պատիւն ի՞նչ բանի մէջ կը կայանայ: Ի՞նչով կը
տարբերի անասուններէն: — Ի՞նչ է քանակա-
նութիւնն: — Ի՞նչ է քարոյականութիւնն:



ԳԼՈՒԽ Բ. — ՊԱՐՏՔ ԱՌԱՅԼԱ

ՊԱՐՏՔ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

Ի՞ ԱՅԼՈՑ ԿԵԱՆՔՆ ՅԱՐԳԵԼ

Հետեւեալ օրն, զբօսանքի պահուն, Արշաիր որ գնացած էր գնդակ գնելու, շքնչասպառ մտաւ բակին մէջ, ուր դաստիարակն կը ճեմէր երկցագոյն աշակերտաց հետ խօսակցելով:

— Տէր, գոչեց, գիմացի փողոցէն ոստիկանք* մարդ մի կը ասնին, ճեռները կապած:

— Գիտեմ, պատասխանեց ուսուցիչն, դատարկաշրջիկ թէմօն է այն, որոյ համար կը կասկածուի, թէ կին մի մեռուցած է Հայոց Զորի* մէջ:

Ամեն կուրծերէ արհամարհութեան ճիշ մի արձակուեցաւ:

— Ո՛հ, տէր, թոյլ տուր մեզ, որ երթամք տեսնելու:

— Ո՛չ, ամենեւին: Այդ այնպիսի տե-

սարան մի է, զոր պարկեշտ մարդիկ պէտք
չէ երբէք հետաքրքիր լինին տեսնելու: Միւս
կողմանէ, թերեւս այդ մարդ անմեղ լինի
իւր դատաստանի մէջ, և իրաւունք չէ կան-
խաւ զայն նախատել իւր թշուառութեան
մէջ:

— Ի՞նչպէս կարելի է որ ուրիշներն ըս-
պաննելու աստիճան չար մարդիկ գտնուին:

— Բուն իսկ այդ է անհասկանալի կէտն:
Պէտք է կորուսած լինել դժութեան և
մարդկութեան ամեն զգացում, գործելու
համար այնպիսի ոճիր, որոյ գաղափարն ան-
գամ զմարդ կը սարսափեցունէ:

— Տէր, յարեց Ս.րամ, պէտք է աշ-
խարհէ վերցունել այնպիսի թշուառական-
ներ:

— Ս.յո՛, բարեկամ, այնպիսիներ արդէն
կը դատապարտուին կամ մահուան կամ
մշտնջենաւոր բռնի աշխատութեանց և յը-
կեանս բանտարկութեան:

— Բայց սակայն անցեալ տարի կաւատ
և ճմօ կռուեցան միմեանց հետ, և վեր-
ջինն գանակի հարուած մի ընդունելով, քիչ
Ժամանակէն մեռաւ. իսկ սպանողն միայն

աասն և հինգ տարի բանտարկութեան դատապարտեցաւ : Եւ իմ հայրս կը պատմէր թէ գիշեր մի Պ. Վարդան, իւր բնակարանին մէջ գողեր մտած լինելով, հրացան արձակեց նոցա վրայ, և գողերէն մին սպաննեց . բայց յետոյ ազատ թողուեցաւ :

— Վասն զի քո պատմած կաւատ անուն անձն անտարակոյս դիտմամբ սպաննած չէր իւր հակառակորդն, ուստի բարկութեան վայրկեանի մէջ կատարած իւր ոճիրն ծայրագոյն* պատժոյ արժանի չ'նկատուեցաւ : Գալով Պ. Վարդանի, օրինաւոր պաշտպանութիւն էր իւր գործն, և որքան սղբալի թուի նոյն գողին մահն, որոյ վրայ յետոյ անտարակոյս ինքն ալ ցաւած պէտք է լինի, չէր կարելի զայն դատապարտել :

2° ԱՅԼՈՑ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ ՅԱՐԳԵԼ

— Սրդարութիւնն կ'արդելու հաւել մի ուրիշ չարագործութիւն, հուազ ծանր անտարակոյս, բայց ոչ հուազ դատապարտելի, որ է խափանել ուրիշին ազատութիւնն : Յիրաւի տեսակ մի ոճիր է գերու-

Թեան մատնել զմարդ, — ինչպէս կ'ընէին
երբեմն պատերազմի կալանաւորներն*, և
վերջին ժամանակաց մէջ Ամերիկայի* սեւա-
մորթներն, — կամ առանց պատճառի, թոյլ
չտալ ուրիշին՝ ի գործ դնել իւր իրաւունքն
երթալ դալու, ըստ հաճոյից աշխատելու,
ընտանիք ու բնակարան ունենալու, և ըստ
կամաց խօսելու և գրելու:

— Ուրեմն, տէր, միջին դարու այն բըռ-
նապետներն* ու թագաւորներ, Ամերիկայի
այն դաշթականներն, որ այս ամէն բան
կը գործէին, ոճրագործներ էին:

— Զգուշութեամբ պէտք է խօսիլ, վասն
զի ժամանակին վատ սովորութիւններն են
աւելի յանցաւոր քան թէ անհատներու մո-
լութիւններն: Ստոյգ է թէ նոքա որք կա-
մաւ չարաչար կը գործածէին իւրեանց
իշխանութիւն և անգթութեամբ միայն կը
փայլէին, նոքա եղեւոնագործ* էին: Բայց
վտխանակ այժմ զայնս դատապարտելու,
պէտք է ուրախ լինիմք, որ կ'ապրիմք այն-
պիսի դարու մէջ, ուր արդարութիւնն կը
թագաւորէ, և սոյն ոճիրներն գրեթէ ան-
կարելի եղած են:

— Բայց, տէր, ըսաւ Արայ, եթէ այսօր չ'կան բնաւ գերիներ, կան սակայն ծառայներ, որ ենթարկուած են տէրերու, և նոցա կամքէն դուրս բան կարող չեն դործել. միթէ արդարութիւնն է այս :

— Նախ և առաջ, բարեկամ, ծառայներն բռնադատուած չեն այս կամ այն տիրոջ յարելու. կրնան կամովին թողուլ իւրեանց ապրած տունն. բայց ազատութեամբ պայման դնելով, վարձու տուած են իւրեանց ծառայութիւնն փոխարէն դրամի : Յետոյ, տէրերն ալ իւրեանց ծառայից նըկատմամբ ունին նոյն պարտքեր, զոր արուեստպէսներն* ունին արուեստորաց նկատմամբ. ծառայութիւնն ձեռարուեամ* մի է, զոր արժանի է յարգել, ինչպէս պարտիմք յարգել ամեն աշխատութիւն : Երբէք պէտք չէ մտքէ հանէք, բարեկամք, թէ չ'կայ աւելի ազեղ գործ մի, որչափ երբ մարդ մի իւր ծառայող անձերը վատաբար կը նախատէ և կը տառապեցունէ :

3° ԱՅԼՈՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՅԱՐԳԵԼ

— Գողութիւնն նոյնպէս այն չար գործերէն մին է, զոր թէ մարդկային և թէ աստուածային օրէնքներ կ'արդելուն, և զոր ընկերութիւնն ալ կը պատժէ : Գողերն չեն յարգեր այլոց սեփականութիւնն որով չարագործներուն կարգը կը դասուին, վասն զի սեփականութիւնն է մարդոյն աշխատութեան արդիւնքն և նորա ջանից ու վաստակոց պտուղն, զոր նոյն իսկ կենաց հաւասար պէտք է յարգել : Սակայն որովհետեւ իւրեանց պատճառած մնասն անդարմանելի չէ, և իւրեանց ոճիրն նուազ անգթութիւն է, ուստի աւելի նուազ խստութեամբ կը պատժուին քան մարդասպաններն :

Գողութեան շատ կերպեր կան. խարդախութիւն վաճառականին որ կը խարէ գընողն իւր վաճառքին քանակութեան և որակութեան* վրայ, մաքսանենդութիւն* արտածութեան* կամ ներածութեան*, և ընդհանրապէս ամեն կերպ խարդախու-

Թիւն որ վնաս կը պատճառէ թէ՛ մասնա-
ւորներու և թէ՛ ընկերութեան, դողու-
թիւն է:

4^o ԱՅԼՈՅ ՊԱՏԻՒՆ ՈՒ ԿԱՐԾԻՔՆ ՅԱՐԳԵԼ

— Տէր, ընդմիջեց* Հայկ, անցեալ տարի
Տիրան անուն մարդ մի դատապարտեցաւ
երեքօրեայ բանտարկութեան և հինգ ոսկի
տուգանքի*, որովհետեւ յանդգնած էր ըսե-
լու, թէ Հողաբարձութեան Ատենապեան
դող էր: Ի՞նչ ոճիր է այս:

— Ոճիր չէ այդ, բարեկամ, այլ յան-
ցանք է պարզապէս, և նա որ այլոց անունն
կ'արատաւորէ* յանիրաւի, կը պատժուի
արդարութեան կողմանէ: Մարդոյն պա-
սիւն սիրելի է կենաց հաւատար, և զայն
դող անուանել վիրաւորել է նորա պատիւն:
Կառավարութիւնն իրաւունք ունի պատ-
ժելու այսպիսի նախատինքներ, որովհետեւ
առանց բարեսիրութեան, ընկերական
կեանքն անկարելի պիտի լինէր:

Եւ ի՞նչու Տիրան այնպէս զրպարտեց Ա-
տենապեան:

— Ամեն մարդիկ այնպէս կը խօսէին, թէ

Տիրան ազգային խնդրոց մէջ տարբեր կարծիք ունենալով, կ'ուզէր վրէժ լուծել Ասանապետէն:

— Ի՞նչ այլանդակ մտածում. ինչպէս, որովհետեւ ուրիշներն իրմէ տարբեր կարծիք ունին ազգային ծանր խնդիրներու մէջ, պէտք է միթէ ատել զայնս և անուանարկել* : Անտարակոյս, իւրաքանչիւր ոք իրաւունք ունի իւր կարծիքը պաշտպանել և զայն ընդունել տալու ջանալ, բայց պարկեշտօրէն և օրինաւորապէս : Պէտք է ցոյց տալ թէ ազատութեան արժանի եմք, նախ այլոց ազատութիւնն յարգելով :

Կը անսնէ՞ք, աղայք, թէ արդարութիւն մէկ պարտաւորութիւն միայն կը հրամայէ . յարգել զմարդ իւր կենաց մէջ, իւր ազատութեան մէջ, իւր ստացուածոց մէջ, իւր պատուոյն մէջ, և իւր կարծեաց մէջ :

Պ Ա Ր Տ Ք Գ Թ Ո Ի Թ Ե Ս Ն

5° Ո Ղ Ո Ր Մ Ո Ի Թ Ի Ի Ն

— Եւ գթութիւնն, աէր, յարեց Աշոտ, միթէ նոյնպէս պարտք մի չէ՞ :

— Այո՛, սիրելիս, բայց արդարութենէ տարբեր պարտք մի է: Երկուքն ևս սպարտաւորիչ են. միայն թէ իրաւունք չէ բռնադատել զմարդիկ՝ հնազանդելու դժութեան, ինչպէս իրաւունք է արդարութեան համար: Բացատրեմ ձեզ:

Մարդ մի, որ կ'սպաննէ կամ կը դողնայ, արդարութեան հակառակ կը դործէ. բայց մարդ մի որ կը մերժէ հաց տալ անտուաղ* աղքատին, արդարութեան ատեանք չունին օրէնք զայն պատուհասելու, թէպէտ անդուլթն, անարդ և անպատիւ կը լինի յաչս Ժողովրդեան, և պատասխանատու է Աստուծոյ և իւր խղճին առջեւ:

Այսպիսի պարագայից մէջ պէտք է հնազանդիլ սրտի ձայնին, խորհելով միանգամայն, թէ ամեն մարդիկ մեր եղբայրներն են, և միշտ պէտք ունիմք միմեանց օգնելու: Գթութիւնն գեղեցկագոյն առաքինութիւնն է, որով մարդ կը բարձրանայ, և իւր քաղցր յիշատակն անջնջելի կը թողու երախտագէտ սրտերու մէջ. բարեգործ անձինք ընկերութեան պատիւն են և Ժողովրդեան օրհնութիւնն կ'ստանան: Ուրեմն

պէտք է իւրաքանչիւր ոք, իւր մանուկ հասակէն սկսեալ, ազնիւ ու մարդասէր զգացումներով զարգանայ, և իւր կարողութեան համեմատ, միիթարէ ոչ միայն մարմնով թշուառներն, օգնելով աղքատաց, դարման տանելով հիւանդաց, և առատօրէն ողորմութիւն շնորհելով կարօտելոց, սրբոց և այրեաց*, այլ նաեւ բարեգործութեան ամեն կերպ միջոցներ ի գործ դնելով, նոցա համար՝ սրք պէտք ունին մեր փոփանաց, մեր խրատուց, մեր այցելութեան, մեր իմաստութեան: Ամեն ոք չէ կարող ողորմիլ, բայց ամեն ոք կարող է ո՛ր և իցէ եղանակաւ բարոյական օգնութիւն մատուցանել իւր ընկերին:

6⁰ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՍՐՏԻ

— Սակայն բաւական չէ օգնել միայն, պէտք է նաեւ սիրել մեր նմաններն, և մանաւանդ մեր ազգակից եղբայրներն, ու մասնաւորապէս այն մարդիկ, որ զուրկ են բնական սիրելիներէ:

— Ի՞նչպէս կարելի է այդ, տէր, յարեց Գարեգին:

— Երբ կը փութամք օգնել ծերոց, որք զաւակ չունին մխիթարուելու համար, պէտք է այնպէս քաղցրութիւն և մեծարանք ցոյց տամք, իբր թէ մեր ծնողաց կ'օգնեմք. տալու կերպն աւելի հաճելի է քան տրուած իրն. արժի ողորմութիւնն կը կրկնապատկէ զողորմութիւն մարմնոյ:

Սոյնպէս պէտք է ընել նաեւ որբոց համար: Արդէն զիտէք, նոքա բաւորովին լքեալ չեն մեր ընկերութեան մէջ, այլ կը պատասխարուին որբանոյներու և մասնաւոր վանքերու մէջ. բայց այս բաւական է միթէ, որ նոքա երջանիկ լինին ուրիշ մանկանց նման: Անշուշտ կը վկայէք թէ ոչ: Ամեն ոք կարող է հաց տալ, բայց ոչ մօր մի նման: Գլխով իւրնն ուրեմն պարտք կը դնէ նոցա վրայ, որք կարողութիւն ու միջոց ունին, համակրութիւն յայանել այն փութելի էակներուն, որք զուրկ են բնութեան գգուանքներէն: Այս մասին կարեւր ձեռք օրինակ բերել Աղնուատիրտ Տիկին Մաքրուհի Գ. . . որ զաւակներ ունենալով հանդերձ մէկէ աւելի ազքատիկ տղաքներ ընդունած է իւր տունն, զորս կը խնամէ մայրաբար,

իրբեւ իւր հարազատ որդի, և կ'ապահովէ նոցա ապագայն: Այս՝ գեղեցիկ օրինակ մի է ճշմարիտ գլխութեան, որում պէտք է հետեւին ամեն ոք և մանաւանդ այն մեծատունք, որ զաւակ չունենալով, կարող են գոնէ հայր լինել որբերու, և գլխած ու ողորմած մեծատան յիշատակ թողուլ աշխարհի մէջ, ինչպէս Աշոտ* ողորմած:

7° ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

— Ո՛հ, տէր, կրկնեց Աշոտ, սրչափ բարի է մեր դրացի աղնիւ վահէն. անցեալ օր ծերունի կին մի իւր նաւակէն ծոփս ինկաւ անզղուշութեամբ. վահէ խկոյն ջուրին մէջ նետուեցաւ, խեղճ կինն ազատելու համար, բայց քիչ մնաց որ իւր կեանքն պիտի կորուսանէր, եթէ նաւալարներ չ'փութային փրկել զինքն կիտամեռ վիճակի մէջ:

— Այդ եւս պարտք մի է գլխութեան. պէտք է անձնուէր լինիմք միմեանց, մտնալով մեր անձնական շահերն մեր ընկերին շահուց համար, մինչեւ իսկ երբ անձնուիրութիւնն զսհողութիւն պահանջէ:

Մարդ՝ ունենալու չէ իւր երակաց մէջ արիւն և իւր սրտի մէջ զգացում, թոյլ տալու համար, որ իւր աչաց առջեւ կորնչի անձ մի, զոր կարելի էր ազատել: Բայց երբ մեր կեանքն վտանգի մէջ կը դնեմք փրկելու համար մեր ընկերին կեանքն, որչափ պատիւ, որչափ զարմացում կը դտնեմք ամեն կողմէ: Հրդեհի և ջուրի ազատարարք արժանի են շքանշաններ* ընդունելու զինուորաց նման, ինչպէս շատ երկիրներու մէջ սովորութիւն է: Իսկ նոքա որ աւելի բարձր անձնութեամբ, իւրեանց ստացուածքն, և մինչեւ իսկ կեանքն կը զոհեն, հասարակաց բարւոյն համար, նոքա առաքինութեան դիւցազներ են, կը հռչակուին ժողովրդեան պսակներով ու ներբողներով*, և իւրեանց համբաւոյն անմահութիւնն է աշխարհի վրայ նոցա միակ արժանաւոր հատուցում, որ կը տեւէ օրդուոց յորդի, միշտ պայծառ, միշտ հիանալի:

8° ԲԱՐՈՒԹԻՒՆ ԱՌ ԿԵՆԴԱՆԻՍ

— Տէր, ըստ Փառնակ, մի քանի օր

առաջ տեսայ դաշտապահն որ սաստիկ յանդիմանութիւններ կ'ուղղէր երկրագործ նըշանին, վասն զի սա չարաչար կը գանակոծէր* իւր եզներն: Միթէ՞ ունիմք նոյնպէս պարսֆ առ կենդանիս՝ ինչպէս ունիմք առ մարդիկ:

— Այո՛, Փառնակ, բայց բոլորովին տարբեր. կենդանիք մեզ նման անձեր չեն, բայց կ'ապրին և կ'զգան. ուստի եթէ ոչ արդարութեամբ, գոնէ գթութեամբ պէտք է վարուիմք այն ստորին էակաց հետ, և համբերութեամբ ու քաղցրութեամբ իշխեմք, ոչ թէ անագորոյն* բռնութեամբ:

Նոքա շատ անգամ կարող չեն հասկնալու մեր միտքն ու կամքն, և նոյն իսկ երբ խեռ* ու ապստամբ լինին, կը հնազանդին այնպիսի բնազդումներու* զորս կարող չեն ուղղել, վասն զի չունին մեզ նման բանականութիւն և ազատութիւն. ուստի պէտք է ներողութեամբ վարուիլ նոցա հետ: Մարդ մի, որ բարի է իւր նմանեաց համար, երբէք չ'կարէ չար լինել անասնոց համար:

Կը տեսնէ՞ք ուրեմն, բարեկամք, բարութիւնն է դարձեալ մեծագոյն առաքինու-

Թիւնն և մեծագոյն պարտքն, ջանացէք գիտուն լինել, ջանացէք աշխոյժ լինել, ջանացէք ճարտար լինել, բայց ամեն բանէ առաջ, ջանացէք լինիլ բարի :



Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ո Ի Թ Ի Ի Ն

ՊԱՐՏՔ ԱՐԴԱՐՈՒՅԵԱՆ

1^o Պէտք է միշտ յարգել այլոց կեանքն . միայն օրինաւոր անձնապաշտպանութեան դէպքի մէջ կրնայ արդարանալ մարդասպանն :

2^o Պէտք է միշտ յարգել այլոց ազատութիւնն , ինչպէս կեանքն : Ծառայք որ ազատօրէն կը ծառայեն վարձքով, պէտք չէ բնաւ իրրեւ գերն նկատուին . իրաւունք ունին վայելելու նոյի մեծարանք զորս կը վայելեն գործաւորք եւ ամեն աշխատաւորք :

3^o Պէտք է յարգել այլոց սեփականութիւնն , նոցա անձին նման :

4^o Պէտք է յարգել այլոց պատիւն ու կարծիքն . բարեսիրութիւնն մին է գլխաւոր պարտուց :

Պ Ա Ր Տ Ք Գ Թ Ո Ւ Թ Ե Ա Ն

5⁰ Գրութեան պարսփերն կը զանազանին արդարութեան պարտքերէն, վասն զի չէ կարելի բռնադատել զմարդ գթութեան, ինչպէս կարելի է բռնադատել արդարութեան: Գթութեան պարտքն կը հրամայէ մեզ ողորմութիւն ընել, մեր կարողութեան համեմատ:

6⁰ Մրսի ողորմութիւնն է սէր ցուցնել նոցա որոց կ'օգնեմք:

7⁰ Պարտք է անձնուէր շինիլ իւր ընկերաց բարւոյն համար. մասնաւոր անձնուիրութեանց երկրաւոր վարձքն է զարմացումն. հանրային անձնուիրութեան երկրաւոր վարձքն է աննահուրիւն:

8⁰ Կենդանեաց նկատմամբ պէտք չէ անգութ լինիլ, այլ զթութիւն եւ բարութիւն ցուցնել:

Հ Ր Ս. Հ Ս. Ն Գ

1⁰ Մարդասպանութիւնն որ միշտ ոճիր է, իւր ծանրութեան աստիճանն չ'փոփոխեր միթէ դէպքերու համեմատ:— Պատմէ օրինակներ, եւ նշանակիչ պատիժներ, զոր պիտի տայիր, եթէ դատաւոր լինէիր:

2° Գերուքիւնն որ հին բարբարոսութեան մնացորդ մի էր, գոյութիւնն չէ ունեցած արդեօք մինչեւ այս վերջին ժամանակներ: — Ի՞նչպէս խափանուեցաւ: — Կը կարծես թէ կարելի է գերութիւնն արդարացունել, գերեալ ցեղին ստորնութիւնն ցոյց բալով: — Ի՞նչ է տարբերութիւնն ծառայից եւ գերեաց: — Ի՞նչ յարաբերութիւն պէտք է լինի գործաւորաց եւ արուեստապետաց մէջ:

3° Յոյց, թէ նեկուքիւնի վաճառականին որ կը գործածէ կեղծ կշիռ, խանութպանին որ կը խարէ իւր վաճառքին որակութեան վրայ, կալուածատէրին* որ խոյս կու տայ* տասանորդէ՛, գողութիւնք չէ՞ն:


4° Ի՞նչպէս կարելի է վնասել այլոց պատշտոյն, այսինքն, բարոյական արժանապատուութեան: — Ուրիշին կարծեաց սգստութիւնն յարգելն կը նշանակէ՞ միթէ իւր կարծեաց մէջ անհաստատ լինիլ:

5° Աղքատք իրաւունք ունին պահանջելու, որ հարուստք զքոքիւն ընեն, պատճառելով թէ նոցա սարաքն է:

6° Ողորմութեան արժէքը արուած իրին գընովը կը չափուի: — Ընդունողին երախտագիտութիւնը ի՞նչ աստիճան ունի համեմատութեան:

7° Ամեն կերպ անձնուիրութեանց մէջ, զոր
գիտես, ո՞րն է աւելի գլխաւորն ու սրտագրաւ* :

8° Կարեմք նկատել կենդանիներն իբրեւ ան-
զգայ մեքենայներ. եթէ ոչ, ի՞նչպէս պէտք է
գործածել զայնս :



Գ Լ Ո Ւ Խ Գ. — Պ Ա Ր Տ Ք Ա Ռ Ա Ս Տ Ո Ւ Ա Շ

1° Բ Ն Ո Ւ Յ Ի Ի Ն Ն

Արձակուրդի մէկ շաբաթ միայն մնացած
էր, և դասատուն պէտք ունէր իւր բուսե-
ղինաց հաւաքածոյն ճոխայնելու, դպրոցին
կից իւր մասնաւոր պարտիզին մէջ, որպէս զի
կարենար մրցանակաբաշխութեան օրն հան-
դիսականաց ցոյց տալ: Ուստի որոշեց նոր
պտոյտ մի եւս ընել իւր աշակերտներով,
այս անգամ դէպ ի ծովափն, քաղերու հա-
մար առուակներու եղերքէն ջրային բոյսեր
ու ծաղիկներ: Յերեկեայ ճաշածամէն յե-
տոյ, աշակերտք իւրեանց դաստիարակին
հետ մեկնեցան ուրախութեամբ:

Օդն պայծառ էր, և մեղմ հովիկ մի կը

զովացունէր միջօրէին* ջերմութիւնն. նոյն պահուն ամեն ոք դասն ու դասագիրք մուստ, հրճուանօք կը խայտար* ազատ դաշտին մէջ, և խումբին զուարթութիւնն բնաւ չ'վրդովեցաւ որ և է անհաճոյ դիպուածով:

Տղայք ամեն կողմ ման* դալով, առատօրէն հաւաքեցին նունուֆար*, հարանմատ*, ամբուլ*, և ուրիշ զանազան բոյսեր, մամուռներ*: Օրն կը տարածամէր*, բայց աշակերտք տակաւին զբաղած էին հատընտիր ծաղիկներ պրպտելու և իւրեանց դասատուին մախաղը* լեցնելու: Հուսկ ուրեմն չուոյ* նշան տրուեցաւ, և տղայք հաւաքուելով, սկսան վերադառնալ:

Երեկոյեան զուարթ տեսարանն յոյժ սիրելի է մանկանց, և ստուգիւ շրջագայութենէն աւելի զուարճալի եղաւ վերագարձը: Դաշտին մէջ հայոց հովիւներ կը հնչեցնէին իւրեանց օրնգին անուշ դայլայլիկ* և հաղարաւոր ոչխարներ միաբերան մնայելով կ'երթային դէպ 'ի իւրեանց փարսը*, կաթնալիր ստինքներով ծանրաբեռնեալ: Կաղամախիներու* կատարն* կը

տեանուէին սարեակներ* , որ զմայլելի գեղ-
գեղանքներ* յօրինելով, կարծես վերջին ող-
ջոյն կու տային օրուան . արօսներու* խումբ
մի աճապարանօք կը սուրար* դէպ ի արեւ-
մուտք, գիշերէն առաջ խրեանց թառն
հանգչելու : Ծովակն* վճիտ* էր հայելիի
նման , և իւր մէջ ցոլացեալ* կ'երեւէին շքը-
ջակայ լերանց ու բլրոց հսկայ պատկերներ :
Երկնից արեւմտեան երեսը ծիրանեւիայլ
ամպեր ոսկեղէն կամար մի ձեւացուցած
էին , և այն կամարին տակէն վահափառ
արեւն ի ծով իջնելով, հոսանուտ* դաշտն
բոցածաւալ հրգեհի երեւոյթ կ'ստանար ,
և հալած մետաղի* ընդարձակ լիճ մի կը
թուէր :

— Ա՛հ, տէր , ինչ գեղեցիկ է այս տե-
սարան , գոչեց հայկ :

— Ս, յո՛ւ, բարեկամ , յոյժ սրտադրաւ է
այս տեսիլ : Տփխիս* ունի աւելի բարձր
լեռներ . Բիւզանդիոն* ունի աւելի պայծառ
արեւ ու գեղազուարճ ծովափներ . բայց
մեք պէտք չունիմք մեր հայրենի աշխարհէն
դուրս որոնել* ընտրեան շքեղ երեւոյթ-
ներ , վասն զի մեր երկրի գեղեցիկութիւնք

չատ խակ են զմեզ դիւթելու* և զմայլեցու-
նելու համար: Սյուպիտի փառաւոր տեսա-
բաններ կը բարձրացունեն հողին և վսեմ
զգացումներ կը ներշնչեն որտին. այնչափ
կ'զգածուի մարդ այս կերպ վայրկեաններ-
բու մէջ, որ ուրախութեան և երկիւղի խառն
սարսուռ մի կ'իմանայ, և իւր անձն բոլո-
րովին անկարող կ'զգայ չարութեան:

— Ո՛հ, այ՛՛, տէր, այնպէս է. մարդ կը
յուզուի բոլորովին, և առանց պատճառը
գիտնալու, կ'զգաս, որ աչերդ. արցունքով
կ'ողողին:

Սմեն ոք լռեց. տղայք յափշտակուած էին
քնութեան վսեմութենէն, և իւրեանց ու-
ղին կը շարունակէին անշշունջ* և մտախոհ*:

2° ԱՍՏՈՒԱԾ ԱՐԱՐԻՉ ՏԻԵՁԵՐԱՅ

Տակաւ արեւն ի մայր մտնելով, գիշե-
րավարն* սկսաւ երեւիլ երկնից վրայ. յե-
տոյ մի ուրիշ աստղ. և ապա ուրիշներ:
Դաստիարակն իւր աշակերտաց բացատրեց
նոցա անուններ:

— Տէր, ի՞նչ կայ արդեօք այս աստղե-
րէն վեր, հարցուց Վահագն:

— Դարձեալ ուրիշ աստղեր, և դարձեալ ուրիշներ, այնքան բազմաթիւ և այնքան հեռի, որ չեմք կարող նշմարել ո՛չ մեր աչքերով և ո՛չ ամենամեծ դիտակներով: Ամբաւսիեգերհն է այն, բարեկամ, որոյ մեծութեան հետ բազդատելով, այս մեր երկիրն աւաղի հատիկ մ'է լոկ:

— Բայց ի՞նչպէս կարելի է, որ բոլոր այս աշխարհներ կը շարժին, և իւրեանց ընթացքի մէջ ոչ կը կասին* և ոչ կը շփոթին: Գիշեր և ցերեկ, եղանակներն ու տարիներ միշտ մին միւսին կը յաջորդեն կանոնաւորապէս. կարծես մեքենայ մի է սքանչելի ներդաշնակութեամբ* լարուած, և անշուշտ կայ էակ մի որ այս ամենը կը պահպանէ և կ'առաջնորդէ:

— Այո՛, բարեկամ, Աստուած է, որ այս մեծ տիեզերքն ստեղծած է իմաստութեամբ, և զայն կը կառավարէ գեղեցիկ օրէնքներով ու զարմանալի զօրութիւններով: Մեր հողին կը հիանայ*, երբ դիտեմք երկնից այս անսահման տարածութիւն. բայց ո՛րքան աւելի անսահման է Աստուած, որ այս ամենը գոյացուց: Նա է միակ կասարեալ

էակն, վասն զի ունի ամեն գիտութիւն, զօրութիւն ու բարութիւն, և բոլորովին ազատ է մեր ամեն թերութիւններէն: Բընութեան մեծութիւնն ու գեղեցկութիւն ճշմարիտ վկայութիւնն է Աստուծոյ մեծութեան և փառաց. և աշխարհի վսեմ տեսարանաց առջեւ, երբ մեր աչեր կը սրխրանան*, մեր հոգիք կը խոնարհին և կ'երկըրպագեն Աստուծոյ, որ արարիչն է նիւթական ու բանական արարածոց, և իւր հայրական բարութեամբ կը պահպանէ բոլոր էակներ:

3^o ԿՐՕՆՔ

— Տէր, ըսաւ Ներսէս, սոյն Աստուածն է, զոր կը պաշտեմք, երբ եկեղեցի կ'երթամք:

— Այո՛, ազնիւ Ներսէս. եկեղեցին այն սրբավայրն է, ուր ժողովուրդն իւր կրօնի կը յայտնէ, նուիրելով Արարչին իւր սէրն, երկրպագութիւնն ու երախտագիտութիւնն: Ոչ ոք կարէ մոռնալ զԱստուած, վասն զի պէտք ունիմք նմա թէ՛ վշտաց և թէ՛ յա-

Նողութեանց մէջ: Նա մարդկային մեծ ընտանեաց հայրն է. կ'սփոփէ թշուառներն, կ'սպառնայ չարադործներուն, կը զօրացունէ աշխատող բազուկներն: Գիտունին կը խօսի իւր ճշմարտութիւններով, առաքինւոյն սրտի մէջ կը տպաւորէ իւր անսահման բարութիւն, ամենուն կ'ուսուցանէ իւր օրէնքներ, բնութեան վրայ, խղճին խորն, կրօնի մէջ: Բայց Աստուած տուած է նաեւ մեր հոգւոյն անմահութիւն, և աշխարհի կեանքէն յետոյ պիտի վարձատրէ զմեզ, եթէ ունիմք արժանիք: Ուրեմն մեր մեծագոյն պարտքն է պաշտել զԱստուած և աղօթել այն հաւատքով, որով պաշտեցին և աղօթեցին մեր նախահարք:

— Ըճմարի՞տ է միթէ, տէր, թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ աղօթքն աւելի հաճելի է Աստուծոյ, ինչպէս շատ անգամ լսած եմ իմ ծնողքէն:

— Յիրաւի, բարեկամ, ամեն հոյ պարտաւոր է իւր բոլոր սիրան նուիրել իւր նախեաց կրօնին ու եկեղեցւոյն, որ դարերէ ի վեր դժխաւոր սլատուարն* եղած է հայութեան. ուստի յետին նուաստութեան

գործ է շահու կամ կրից պատճառաւ կրօնափոխութեան գիտել, և ազգային եկեղեցւոյ ծոցէն բաժնուիլ: Բայց սակայն պէտք չէ կարծել, թէ սւրիշ ազգերը զուրկ են կրօնէ. Հրեայն* իւր Սինակոկն* ունի, Թուրքն* իւր Մզկիթ* , Բողոքականն* իւր Ժողովարան, որոց մէջ նաեւ մարդիկ կը պաշտեն զՍ.ստուած: Աշխարհի սկիզբէն ի վեր չէ եղած ազգ մի առանց կրօնի. բայց ստոյգ է թէ Քրիստոնէութիւնն գերազանց է իւր կատարելութեան և օգտակարութեան կողմանէ:

4^o Խ Ի Ղ Ճ

— Այժմ կարգն է ուրեմն բացատրել, թէ Ս.ստուած զմարդ ստեղծելով, թողած չէ զինքն, որ խողալիկ լինի բախտին, այլ տուած է նմա կարողութիւն բարին ընտրելու և չարէն խորշելու*: Բայ ի կրօնական օրէնքներէ, ամեն մարդիկ հաւասարապէս ունին նաեւ բնական օրէնք, զոր Ս.ստուած ինքնին քանդակած է մեր խղճին և մեր բանականութեան խորն: Գիտե՞ս, Վահրամ, ի՞նչ է իսիղն:

— Տէր, ներքին զգացում մի է, որ մեզ կ'զգացունէ, թէ ինչ պէտք է գործել և ինչ պէտք է չ'գործել:

— Լաւ, և ինչ կ'իմանամք, երբ խղճի պատուէրներուն անհնազանդ լինիմք, և չար գործեմք:

— Տէր, այն ժամանակ կ'զգամք, ինչպէս ըսեմ, տեսակ մի նեղութիւն, ամօթ, ցաւ, զոր խղնախայթ* կը կոչեմք:

— Տեսեմ, Յուսիկ, կարե՞ս օրինակ տալ խղճի խայթ ունեցող անձանց:

— Այո, տէր. Կայէն* իւր եղբայրն ըսպաններով, այնքան սաստիկ խղճի տաղնապ զգաց, որ խելացնոր կը թափառէր, կարծես անձանօթ թշնամիէ մի հալածուելով:

— Շատ ճշմարիտ է այդ. խղճի դէմ գործել անկարելի է առանց ներքին անհանդստութիւն մի զգալու. ընդհակառակն երբ խղճի հրամաններն կը կատարեմք, ճշմարիտ ուրախութիւն կ'զգամք մեր հոգւոյն մէջ, վասն զի զխաեմք, թէ պարտք մի կատարեցինք: Դուք ամենքդ անտարակոյս կը ճանչնաք սոյն զգացումներն, և մերթ խղճի ուրախութիւն կ'զգար, երբ լաւ աշ-

խատու թեամբ անցունէք ձեր օրն կամ ողորմութիւն մի շնորհէք աղքատին, մերթ ևս խղճի տագնապ կ'իմանաք, երբ զբազարաութեամբ ձեր ընկերն անպատուէք կամ ձեր ծնողաց անհնազանդ գանուիք:

5° ՃՇՄԱՐԻՏՆ, ԲԱՐԻՆ, ԳԵՂԵՑԻԿՆ

— Սյժմ, աղայք, զիտէք թէ ի՞նչ կը հրամայէ մեզ խիղճն:

— Նախ, տէր, սիրել և խօսիլ նեմարսութիւն. նա որ ստախօս է անպատիւ և անվտասհելի կը լինի:

— Լաւ, և յետոյ: Տեսնեմք, օգնեմքերդ, երբ գեղեցիկ գործի մի ականատես լինիմք, երբ գեղեցիկ քերթուած* մի կարգամք, երբ գեղեցիկ տեսարան մի գիտեմք, ի՞նչ զգացում կը ծագի մեր ներսն:

— Ա՛հ, կը յիշեմ. պէտք է զարմանալ այն ամեն իրաց վրայ, որոց մէջ գեղեցկութիւն կը տեսնեմք, և սիրել բոլոր այն մարգիկ, որ գեղեցիկ ու վսեմ գործեր կը գործեն:

— Սմբողջացուր. տակաւին ի՞նչ կը հրամայէ մեզ խիղճն:

— Գործել բարին, տէր, այսինքն կատարել իւր պարտքերն առ անձն, առ ընկերն, և առ Աստուած: Սոյն պարտքերն, արդէն ուսուցիք մեզ, երեք պատուէր կը պարունակեն, արդարութիւն, գրութիւն ասուածպաշտութիւն: Բայց այնպէս կը կարծեմ, տէր, թէ խղճի սոյն պատուէրները նոյն խի Աստուծոյ մեր վրայ դրած պարտքերն են, վասն զի ինքն է որ մեզ խիղճ տուած է:

— Իրաւունք ունիա, Հայկ. եթէ կ'ուզեմք նուիրել Աստուծոյ սէր, պատիւ և երախտագիտութիւն, որ մեր պարտքն է, մէկ խօսքով, եթէ կ'ուզեմք պաշտել զԱստուած, լաւագոյն միջոցն է, ո՛չ միայն կրօնական պարտաւորութիւններն յարգել, այլ նաեւ ամեն բանի մէջ սիրել և գործել նրեմարիսն, բարին, գեղեցիկն, որոց գաղափարն դրած է Աստուած մեր հոգւոյն խորն, իբրեւ յաւիտենական կանոն մեր մտածմանց և մեր գործոց:

Բայց ահա գիշերն կը հասնի. աճապարեմք. ձեր ծնողք կ'սպասեն ձեզ, և կ'ըզգամ թէ պէտք ունիք հանգչելու:

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ո Ի Թ Ի Ի Ն

1° Բնութեան զեղեցիութեանց տեսարանն կը ներշնչէ մեզ զարմացումն եւ բարութիւնն :

2° Բնութեան կարգն ու գեղեցկութիւնն կու տան մեզ գաղափար Աստուծոյ որ է կասարեալ արարիչ ինքեաց :

3° Աստուծոյ գործերը կը ներշնչեն մեզ սէր ու երախտագիտութիւն , եւ կրօնքն սլարաք կը դնէ մեզ պաշտել զինքն ու աղօթել :

4° Խիղճն է այն զգացումն որ մեզ կը հրամայէ մեր սլարաքն կատարել եւ չարէն խորշիլ :

5° Խիղճն կը սլարտաւորէ զմեզ սիրել ճշմարիտն , բարին , զեղեցիկն , առանց որոյ չէ կարելի սլաշտել զԱստուած :

Հ Բ Ա Հ Ա Ն Գ

1° Ի՞նչ կլիմանամք բնութեան զեղեցիութիւնք ըսելով : Պատմէ աշխարհի գեղեցկագոյն տեսարաններէն մի քանին :— Ի՞նչ զգացում կ'ունենամք սոյն գեղեցկութեանց առջեւ :— Գեղեցկին վրայ զարմացումն ի՞նչպէս բարի գործերու փափաք կու տայ մեզ : Օրինակ մի տուր :


2° Ի՞նչպէս բնութեան տեսարանն կը ճանչ-

ցունէ մեզ զԱստուած, արարիչ Տիեզերաց: —
Ի՞նչ կ'իմանաս աշխարհի կարգն ու իւր օրինաց
կանոնաւորութիւնն ըսելով: — Ի՞նչու կ'ըսեմք
Աստուած կասարեալ:

3⁰ Ի՞նչ է կրօնք: — Ի՞նչու Հայր կ'անուա-
նեմք զԱստուած: — Կրօնքն ի՞նչ գլխաւոր
պարտքեր կը դնէ մեր վրայ: — Ի՞նչ պարտք
ունիմք առ Ազգային Եկեղեցի:

4⁰ Ի՞նչ է խիղճն: Ի՞նչ կը հրամայէ: Ի՞նչ
կ'զգամք, եթէ խղճի չ'հնազանդիմք: Պատմէ
օրինակներ նշանաւոր խղճախայթի:

5⁰ Մեր պարտքերն ի՞նչպէս կարելի է ամ-
փոփել երեք բառով: Ինչո՞ւ պարտիմք սիրել
նշնարիսն, բարին, զեղեցիկն:



Բ Ա Ռ Ա Յ Ո Ի Յ Ա Կ

Ազգանուէր-Հայունեաց ընկերութիւն. կանանց ընկերութիւն, որու կեդրոնն է Կոստանդնուպօլիս, եւ նպատակն է Հայրենի Աշխարհին մէջ իգական սեռի կրթութիւնն յառաջ տանիլ. ունի չորսէն աւելի վարժարաններ:

Ազգասէր. տիտղոս Ներսէս սլատրիարքի վարժապետեան, վախճանեալ 1884, Հոկտ. 25:

Ակնառութիւն. երեսպաշտութիւն, դատաստան՝ վիճակին նայելով ոչ թէ իրաւունքին:

Ակնկո՛ր. երեսը կախած, աչքն ի դետին:

Աղօրիֆ. ջրաղաց կամ հողմաղաց:

Ամերիկա. չորրորդ մասն աշխարհի, որ Քրիստոսփոր Քոլումպոսի ձեռամբ դտնուեցաւ 1492ին:

Ամոնել. քաղցրացունել, բարեխառնել, կալուղցնել:

Այգեսաց. վան քաղաքի մէկ մասն, սլաւիպներէն դուրս, մէկ ժամու չափ հեռաւորութեամբ, դէպ ի արեւելք, այգիներով ու ծառուղիներով զարդարուած:

Այլանդակութիւն. ծիծաղելի հանգամանք:

Այրի. կին որոյ այրը մեռած է, որբեւարի:

Անագորոյն. անգութ:

Անբարեխառնութիւն. չափազանցութիւն:

Անդորութիւն. հանգստութիւն, խաղաղութիւն:

Անիշխանութիւն. վիճակ ազգի կամ աշխարհի, ուր ոչ ոք կը հրամայէ, եւ ուր օրէնքները խափանուած են:

Անխոնջ. աշխատութեան մէջ չ'թուլցող, չյողնող:

Անխիւր. համարձակ, առանց ակնածելու:

Անձեղ . ագռաւի տեսակ թռչուն , որոյ փետուրներն սպիտակ ու սեւ են :

Անձկուքիւն . նեղութիւն , տառապանք :

Անյողղող . հաստատուն , անշարժ :

Անճուկ . անձայն , լռիկ միջիկ :

Անուանարկել . ուրիշին անունը աւրել :

Անպայման . անչափելի :

Անսալ . միտ դնել , հնազանդիլ :

Անսուաղ . քաղցեալ , անօթի :

Աշխատութիւն . Տ . Ռեթէոս Պէրալէրեանի գեղեցիկ ստանաւորներէն մին է :

Աճոս (ողորմած) . թագաւոր Բագրատունի , Քրիստոսի 952—977 թուականին . Անի քաղաքը զարդարեց , եւ նշանաւոր եղաւ իւր աղքատասիրութեամբն ու ողորմածութեամբ :

Ասաղձագործ . փայտի վրայ աշխատող արուեստաւոր :

Արասաւորել . մէկուն պատիւը աղտոտել :

Արբժիռ . գինով , խմած :

Արմսիք . ցորենի տեսակներ , որք կը գործածուին մարդոց սննդեան :

Արուեստապէս . արհեստաւորաց գլխաւորն :

Արսածութիւն . գործողութիւն մէկ երկրին բերքերն ուրիշ երկիր փոխադրելու :

Արօս . մեծ թռչուն , երկայնտան եւ կէս ջրային , տուար կարճ եւ կուրծքն ու կոնակն սպիտակ :

Աւան . մեծ գիւղ , փոքրիկ քաղաք :

Աւելորդապատեութիւն . ոչինչ բաներու հաւասար ընծայել :

Բախսախօս . բախտ նայող , պատմող :

Բարգաւանութիւն . երջանկութիւն , զարգացում , պայծառութիւն , բարօրութիւն :

Բեղն վանայ . ընդարձակ քարայրներով ,

եւ բեւեռագիր արձանագրութիւններով վանքաղաքին արեւեան կողմէն դէպ ի արեւմուտք ձգուած, քարաշէն, բարձր եւ ահարկու շինուածք, զոր Ասորեստանի Շամիրամ թագուհին շինել տուած կը կարծուի:

Բեւեռագիր. բեւեռի ձեւով փորուած գիր, զոր հին ժամանակ կը գործածէին:

Բիւզանդիոն. հին անուն քաղաքին, որ այժմ կը կոչուի Կոստանդնուպոլիս:

Բնագղում. ներքին զգացում, առանց խորհրդածութեան, որով կը գործեն անասունք:

Բողոքական. քրիստոնէից այն ճիւղն որ Լուտերի ձեռամբ սկսաւ Քսի. 1517 թուականին:

Բոնապետ. այն իշխանն կամ թագաւորն, որ բռնութեամբ կ'իշխէ եւ ոչ օրէնքով:

Բոնցի. սեղմեալ ձեռքով:

Բրուսոս. նշանաւոր Հռովմայեցի, որ աշխատեցաւ թագաւորներն իւր հայրենիքէն վանելու եւ Հռովմի մէջ հասարակապետութիւն հաստատելու, Քրիստոսէ 510 տարի առաջ:

Գահավէժ. բարձր անդէ վար գլորիլ:

Գաղթել. իւր հայրենիքը թողուլ եւ երթալ ուրիշ երկիր հաստատուիլ:

Գայթ ի գայթ. սահելով, գլորելով:

Գանակոծել. սաստիկ ծեծել:

Գեղգեղ. անուշ ձայնով եղանակ:

Գիւեռավար. արեւին բոլորը դարձող մոլորակ ստղերէն մին, որ երբ առաւօտներն երեւի, կը կոչուի արուսեակ, իսկ արեւուն մըտնելէն յետոյ, կը կոչուի գիւեռավար:

Գոյժ. ստացուածք, ինչք:

Գրականութիւն. գեղեցիկ գրուածքներու արուեստ. մատենագրութիւն:

Գրաւ. ապահովութեան համար սլարտքի
փոխարէն արուած առարկայ :

Դայլայլիկ. եղանակ, երգ :

Դաւ. խարէութիւն, մատնութիւն : . . . Նիւ-
թել. խարէական միջոցներով կործանելու կամ
սպաննելու աշխատիլ :

Դիւթել. հրապուրել, սիրտը գրաւել, յա-
փըշտակել :

Դիւցազնութիւն. մեծութիւն հողւոյ, քա-
ջութիւն եւ վեհանձնութիւն որ բարձրագոյն
մարդոց յատուկ է :

Եզնալեզու. բժշկական բոյս, մազոտ տերեւով :

Եղէզն. ողորկ, ուղիղ եւ երկար տունի մի,
որոյ մէջն խողովակաձեւ է :

Եղեռնագործ. ծանր յանցանք գործող (մար-
դասպան) :

Երագահան. խարէութեամբ երազ մեկնող :

Երաշխաւորել. սաշտպանել, ապահովել,
զգուշանալ :

Երդիֆ. տուն, տանիք :

Երեսփոխանական ժողով. աղբին կողմանէ
քուէարկութեամբ ընտրուած անձերու ընդ-
հանուր ժողով, ուր աղբին կամ դաւառին
ընդհանուր շահուց վրայ միայն կը խօսուի :

Երէ. որսալու անասուն :

Երիցուկ. բժշկական հոտաւէտ բոյս մի, որոյ
ծաղիկն չըջանակ մի է փոքրիկ սպիտակ տերեւ-
ներու, մէջ տեղը դեղին :

Զեղխութիւն. չափազանցութիւն ուտելիքի
եւ ըմպելիքի :

Զլանալ. խնայել, մերժել :

Զոհողութիւն. իւր ամենասիրելի մէկ բանէն
հրաժարում :

Ընդդիմաբանել . դէմ խօսիլ, հակառակիլ :
Ընդմիջել . ուրիշին խօսքը կէս թողուլ :
Ընկնիլ . տկարանալ, վհատիլ, թուլնալ :
Ընտրող . քուէ տուող :

Թաղական Խորհուրդ . թաղին ժողովրդեան
կողմէն քուէով ընտրուած անձինք, որ միայն
թաղին գործերը վարելու պաշտօն ունին :

Թուրք . օսմանցի, իսլամ կրօնքն ունեցող :
Իմաստուն . անուն որ կը արուէր Յունաս-
տանի հին փիլիսոփայից :

Իմացականութիւն . մտքի կարողութիւն, խո-
րին ծանօթութիւն :

Լիաբուռն . առատօրէն, լեցուն ձեռքով :

Լուսայ . տեսակ մի հին գրամ գրեթէ մէկ
ստակի արժէքով :

Լուսապսակ . պատկերներու վրայ սրբոց
գլուխներուն շուրջը նկարուած լուսաւոր շրջա-
նակ, որ նոցա երկնային փառքը կը նշանակէ :

Լիանել . փողոցը թողուլ, երեսէ ձգել :

Խայրոց . ասեղի նման սուր գործարան,
որով մեղուն կը կճէ :

Խայտալ . սաստիկ ուրախանալ, ուրախու-
թենէն խաղալ :

Խեղ . մէկ անդամը վնասուած կամ պակաս :

Խեռ . անսանձ, ապտտամբ, անհնազանդ :

Խղճախայր . խղճի ցաւ կամ տանջանք :

Խնամատուն . բնակարան ուր մարդասիրա-
բար կ'ընդունուին եւ կը պահուին մանուկներ,
ծերեր, անկարներ, որք կարող չեն ասլրիլ
իւրեանց աշխատութեամբ :

Խոյս տալ . փախչիլ, քաշուիլ :

Խոչընդոս . արգելք :

Խորիսիս . մոմով մեղր, մեղրով լեցուն բջիջ :

Խորեիլ . ատել , զզուիլ , հեռանալ :
Խորհուրդ . մասնաւոր գործեր քննելու եւ որո-
շելու համար կազմուած կամ ընտրուած ժողով :
Խորհրդածել . մտածել , դատել :
Սուժել . բազմութեամբ վրայ վազել , դիմել :
Ծայրագոյն պահիժ . մահուան պատիժ . (կա-
խաղան կամ գլխատուժիւն) :
Ծննդավայր . այն տեղն որ մեր ծննդեան
հայրենիքն է :

Ծովակն կամ լիճ Վանայ , (Բզնունեաց ծով) .
Վան քաղաքին արեւմտեան կողմն եղող ընդար-
ձակ լիճ , ջուրն աղի եւ դառն , կը տարածուի
արեւելքէն արեւմուտք 24 ժամ եւ հարաւէն
հիւսիս 8 ժամ տեւողութեամբ :

Վազ . թեթեւ ու բարակ տեսակ մը մարմին ,
նման օդի , որ վառելով ջերմութիւն ու լոյս
կուտայ :

Վալանաւոր . իբր յանցաւոր բռնուած :

Վալուածատէր . նա որ եկամուտ բերող ստաց-
ուածք ունի :

Վախարդութիւն . խաբէական զօրութիւն՝
քնութեան հակառակ բաներ գործելու :

Վաղամախի . մեծ ծառ որ ընդհանրապէս
խոնաւ տեղերու վրայ կ'աճի :

Վաղնի . մեծ ու ընդարձակ ծառ , որոյ փայ-
տը խիստ կարծր է եւ օգտակար :

Վայէն . Աղամի անդրանիկ որդին :

Վանխել . աճապարեւ , կանուխ սկսիլ :

Վապելանոց . վարնոց գինետուն :

Վասիլ . շարժումէ դադրիլ , կենալ :

Վասար . ծայր , գլուխ , (ծառոց , լէրանց) :

Վարեկցիլ , կարեկցութիւն . խղճալ , գթալ :

Վարի . շատ , չափազանց :

Կեղեֆել . չարչարել , նեղութիւն տալ :

Կեսամբել . յանդիմանել :

Կոգի . կարագ իւղ :

Կրեսոս . Թագաւոր Լիւդիոյ (Փոքր-Ասիոյ) , հռչակաւոր իւր հարստութեամբ , յաղթուեցաւ եւ գահազուրկ եղաւ Պարսից Կիւրոս Թագաւորէն , Քրիստոսէ 544 տարի առաջ :

Համակարիֆ . ուրիշին ցաւոց եւ ուրախութեան մասնակից , կարեկից :

Համեմատութիւն . չափ , բաժին :

Հայրայրել . ձեռք բերել , ճարել :

Հայոց ձոր . լեռներու մէջ ընդարձակ ձորադաշտ , վան քաղաքի հարաւային կողմը , որ կը կարծուի թէ Հայկոյ պատերազմի դաշտն է :

Հանդուրժել . համբերել , տանիլ :

Հասարակապետութիւն . պետութիւն ուր ժողովուրդը կը կառավարէ երկիրն իւր ընտրած երեսփոխաններու ձեռքով :

Հաստատութիւն . շէնք , որ երկու կերպ է , նիւթական , ինչպէս են դպրոցք , հիւանդանոցք , եւն . եւ բարոյական , ինչպէս է օրէնք , սահմանադրութիւն , եւն :

Հարսնմատ . նուսուֆար ծաղկին մէկ տեսակն :

Հարսահարեալ . զօրաւորին ձեռքէն զրկում ու չարչարանք կրող :

Հաւասարակեռութիւն . հաւասար ուղղութիւն , մարմնոյ մի հանգստեան վիճակն՝ որ յառաջ կու գայ զիրար ջնջող երկու հակառակ զօրութիւններէ :

Հաւաքածոյ . նման իրաց միասին ժողովում :

Հեգնել . ծաղրել , կատակել , նախատել :

Հէգ . թշուառ , խեղճ :

Հիանալ. դարմանալ, յափշտակուած մնալ:

Հիւծիլ. հալիլ, մաշիլ:

Հիւպատոս. հին Հռովմի երկու գլխաւոր պաշտօնէից տիտղոս կամ անուն:

Հմայեակ. անհաւատալի զօրութիւն ունեցող ծրար, զոր մինչեւ այսօր նախապաշարեալ մարդիկ իւրեանց վիզէն կը կախեն:

Հմայութիւն. սուտ գուշակութիւն:

Հոծ. լեցուն, խիտ, շատ:

Հոսանուս. հեղուկ, վազուկ:

Հովիս. քիչ խորութիւն ունեցող զառիվայր:

Հոռով. մայրաքաղաք Իտալիոյ, որ երբեմն Հռովմայեցւոյ կայսրութեան մայրաքաղաքն էր, 755 նախ քան զՔս. մինչեւ 476 յետ Քսի:

Հրեայ. ժողովուրդ Ասիոյ, սեմական ցեղէն, երբեմն զօրաւոր, այժմ ամեն երկիր ցրուեալ, որ կը կոչուի նաեւ Երրայեցի, Իսրայելացի:

Հրնուիլ. ուրախանալ:

Չեռարուես. ձեռքով գործելու արուեստ:

Չեռնպահ. քուէարկութեան չմասնակցող:

Չօնել. ընծայել. նուիրել:

Չահիկն. ջրոտ ու տղմոտ դաշտ:

Մախաղ. կաշիէ աման (տոսլրակ):

Մամուռ. ջրոտ տեղեր՝ քարերու վրայ բուրդի ձեւով բուսնող տեսակ մի խոտ:

Ման գալ. ժուռ գալ, պտըտիլ:

Մասակարարել. պարգեւել, տալ՝ իւրաքանչիւրին իւր բաժինը:

Մասեճաղարան. գիրք պահելու տեղ:

Մարգ. խոտ բուսցնելու յատկացեալ դաշտ:

Մախոիլ. հակառակիլ, կռուիլ, դիմադրել:

Մախանեճոսիւն. առանց օրինաւոր տուրք վճարելու սպրանք փախցունել:

Մեղուազան. մեղուի նման աշխատասէր :

Մեհամարտուքիւն. երկու հակառակորդ կողմերէն որոշեալ մասնաւոր անձանց պատերազմ :

Մեսրոպ կամ Մաւսոց. ծնեալ ի թուին Գրիստոսի 352, հնարեց հայերէն նշանագրերն, ունի ընտիր գրուածներ, եւ կը համարուի նախահայր հայոց գրականութեան ոսկեդարու :

Մեսաղ. հողէ հանուած կարծր նիւթեր որք աաքցունելով կը հալին :

Մզկիթ. աղօթատեղի մահմետականաց :

Միացեալ-Ղնկերութիւնք. Արարատեան, Դըպրոցասիրաց եւ Կիլիկեան ընկերութիւնք 1879 յունիս 1 ին միացան, եւ կ'աշխատին Հայրենեաց մէջ ձրի ուսում տարածելու, եւ արդէն բացած են 50էն աւելի դպրոցներ :

Միջօրէ. կէս օր, հասարակօր :

Մուս. Տարօն գաւառին գլխաւոր քաղաքը, 20,000 բնակչօք, մեծաւ մասամբ հայ, որոյ մօտ է Ս. Կարապետի նշանաւոր վանքը :

Մսաղիւր. սիրով, ազատ կամքով :

Մսախոն. մտածութեան մէջ ընկղմած :

Յաձիլ. անդադար շարժիլ, այս կողմ այն կողմ երթալ :

Յառիլ. աչքը անկելով նայիլ :

Յարել. կցել, անմիջապէս շարունակել, պատասխանել : Մէկուէն քով մտնել :

Յարկիչ. սուներու վրայ ծածկող :

Յիւսահարան. ամեն գործ որ մեծ մարդոյ մի յիշատակն յաջորդ սերունդին կ'անցունէ եւ կ'անմահացունէ :

Յոյնք. ժողովուրդ որ կը բնակի Պալքան լեռներէն վար, Յոնիական ծովին, Միջերկրականին եւ Արշիպեղազոսին մէջ տեղ :

Յոռի, յոռեգոյն. գէշ, վատ, ստորին :

Յուռուր. գաղտնի հնարքներ զոր կախարդ-ները կը գործածեն :

Նախանձաւորութիւն. վեհանձն զգացում որ կը մղէ հաւասարիլ կամ գերազանցել իւր ընկերն արժանիքով, խելքով, առաքինութեամբ :

Նախապաշարում. առանց քննութեան ընդունուած սխալ կարծիք :

Նախասեսութիւն. ապագան մտածելու եւ հոգայու կարողութիւն :

Ներածութիւն. օտար երկրէ եկած վաճառք :

Ներքող. գովութիւն, պատիւ :

Ներդաւնակութիւն. կանոնաւորութիւն, կարգաւորութիւն :

Ներկայացուցիչ. ուրիշին փոխանորդ :

Նեցուկ. օգնական :

Նժդեհութիւն. պանդխտութիւն, օտարութիւն :

Նոյ. այն նահապետն որ ջրհեղեղէն ազատեցաւ, մի տապանի կամ նաւի մէջ ապաստանելով :

Նունուֆար. ջրային բոյս, լայն ու բոլորչի տերեւներով, գեղին կամ սպիտակ ծաղիկներով :

Նօրութիւն. սաստիկ քաղց, անօթութիւն :

Շաղփաղփել. շատախօսել, փուճ ու աւելորդ խօսքեր խօսիլ :

Շամիրամ. թագուհի Ասորեստանի, Քրիստոսէ 1767 տարի առաջ :

Շրջմոյլիկ հուր. թեթեւ ու վաղանցիկ բոց, փոսփորացեալ ջրածին կազերէ յառաջ եկած, որք նեխեալ վայրերէ, գերեզմաններէ եւ ապականեալ նիւթերէ կը ծնանին :

Շխնուան. մետաղէ նշան որ կը տրուի վարձատրութիւն գովելի գործերու :

Ոգեպահիկ • ասլրեչու չախ հաղիւ բաւական
ուտելիք :

Ողողել. ջրով ծածկել, ջուրն իւր սահ-
մաններէն դուրս ելլել :

Ոնիր. բնական, կրօնական, բարոյական եւ
քաղաքական օրէնքի մի դէմ գործուած ամե-
նածանր յանցանք :

Ոսիկան. քաղաքին բարեկարգութեան հըս-
կող զինուոր :

Ոսկեղար. հայոց գրականութեան փայլուն
ժամանակը, հինգերորդ դար :

Որակուրիւն. որպիսութիւն, տեսակ :

Որոնել • փնտռել :

Ուռեցի. ծառ միջահասակ, փոքրիկ տերեւ-
ներով, որ խոնաւ տեղեր կ'ածի, եւ իւր մէկ
տեսակին բարակ ու երկայն ճիւղերն դէպ ի
վար կը կախուին :

Ուրուական. մեռեալ մարդու ոգին, զոր
ուամիկները կը կարծեն թէ կ'երեւի :

Չարագուճակ. վտանգ գուշակող, յայտնող :

Չու. երթ, մեկնումն :

Պայմանագրութիւն. երկու կամ աւելի ան-
ձանց մէջ կատարուած գրաւոր պայման :

Պաշտօնագիր. հրամայող իշխանութեան կող-
մանէ գրուած գիր :

Պատկանիլ. վերաբերիլ, յարմարիլ :

Պատուար. թշնամեաց դէմ զգուշանալու
համար շինուած պատ :

Պատասպարան. սպաւինեչու կամ հանգչե-
լու տեղ, (որբանոց, աղքատանոց) :

Պատրուակ, պատրուակել. սուտ պատճառ-
ներով պակասութիւնը ծածկելու ջանալ :

Պարարել. լաւ սնուցանել, գիրցունել :

Պարսք . բարերեր , լաւ արդիւնք տուող :

Պիճակ . միջատ մաշկաթեւ , նուրբ , խայթոցաւոր , դեղնագոյն :

Պօլիս . (Կոստանդնուպօլիս) , Մարմարա եւ Սեւ ծովը միացնող ջրանցին վրայ շինուած քաղաք , այժմ մայրաքաղաք Թուրքիոյ , 800,000 բնակիչներով , որոց 200,000ը հայ են :

Ջրածին . կազ որմէ բաղադրուած է օդը :

Սահակ (Պարթեւ) . ծնեալ յամին 353 , որդի Մեծին Ներսեսի , Կաթողիկոս հայոց , գլխաւոր Թարգմանիչ Աստուածաշունչի :

Սահմանադրութիւն . հիմնական օրէնք , որով ազգը կը կառավարուի :

Սասարեւ . օգնեւ :

Սարեակ . թռչուն սեւափետուր , կարմրալըտուց որ գեղեցիկ կը նուագէ սուլելով :

Սերս . հաստատուն , ամուր :

Սրափիլ . խելքը գլուխը դալ , (գինովին) :

Սիւնակոկ . աղօթատեղի հրէից :

Սլաւնալ . զարմնալ , սքանչանալ , զմայլիլ :

Սմբուլ . մութ մանիշակագոյն հոտաւէտ եւ գեղեցիկ ծաղիկ մի , շուշանի ցեղէն :

Սնապարծութիւն . ոչինչ բաներու վրայ սլարծենալ , հպարտանալ :

Սոկրատ . նշանաւոր հին փիլիսոփայ Աթենացի , որոյ համար զրպարտեցին թէ կրօնքը ջնջել կ'ուզէ , եւ դատաւարտեցին մոլեխինդ խմելով մեռնելու , Բրիստոսէ 400 տարի առաջ :

Սուրալ . արագութեամբ վազել նեախ սլէս :

Սպառումն . ջնջում , հատնիլ :

Սպարսա . քաղաք հին Յունաստանի որոյ բնակիչներն (Սպարտացիք) բոլոր Յոյներէն աւելի քաջ կը համարուէին :

ՍՏԱՆՃՆԵԼ . իւր վրայ առնուլ, յանձն առնուլ :

ՍՐՏԱԳՐԱԼ . սիրտ յայիշտակող :

ՍԲԱՆՀԱՆՈՒԹՅԱՆ . սաստիկ զարմանալ, ապշիլ :

ՎԱՆ . գլխաւոր քաղաք Վասսուրականի նահանգին մէջ, համանուն լճին քով, 50,000 բնակչօք, մեծ մասամբ հայ :

ՎԱՇԽԱՌՈՒ . օրէնքով սահմանուած սլայմանէն աւելի կրկնապատիկ տոկոս առնող :

ՎԱՏՔԱՐԱՆՈՒ . գէշնալ, աւրուիլ :

ՎԱՏՆԵԼ . փճացունել (ժամանակ, դրամ) :

ՎԱՐՇՈՒՔԻԼԵՆ . ազգային դորձերը վարող մարմին, որ կը բաղկանայ Քաղաքական եւ կրօնական ժողովներէ :

ՎԿԱՅԱԳԻՐ . գիր որ կը վկայէ թէ աշակերան կատարած է իւր ուսմանց ընթացքն :

ՎԿԱՏՈՒՔԻԼԵՆ . թուլութիւն, յուսահատութիւն :

ՎԿՈՒԿ . խելքի եւ բնութեան հակառակ դօրութիւն ունեցող կարծուած մարդ :

ՎԿԻՏ . մաքուր, յստակ, սլայծառ :

ՏԱՂԱՆՈՒ . ձիւրք, շնորհք, խելք :

ՏԱՍԱՆՈՐՈՒ . երկրագործին բերքին տասներորդ մասը որ կառավարութեան բաժինն է :

ՏԱՏԱՆԻՒ . երերալ :

ՏԱՐԱԳ . հագուստի ձեւ :

ՏԱՐԱԺԱՄԵԼ . (օր). երեկոյ լինել :

ՏԵՆՈՒ . հիւանդութիւն որու նշանն է բազկերակի արագութիւն եւ ջերմութիւն :

ՏԵՐԵՎՈՒԿ . բժշկական բոյս, փոքրիկ կարմիր ծաղիկներով, որմէ դեղագործներն հիւթ մի կ'արտադրեն :

ՏԻՏՈՒ . անուն սլատուոյ :

Տոկալ . դիմանալ , համբերել :

Տուայթիլ . նեղուիլ , մաշուիլ , չարչարուիլ :

Տուգանի . եղած շնասին փոխարինութիւն :

Տիլսիս . գլխաւոր քաղաք կովկասի իշխանութեան , 70,000 բնակիչներով , որոց մէկ մեծ մասն հայ :

Տօր . սաստիկ տաքութիւն օդոյ :

Յանկապաս . ճիւղերով հիւսուած պատ՝ այգիի կամ պարտեզի շուրջ :

Յասկոս . բարկացող , դիւրագրգիռ :

Յոլանալ . առարկայի մի պատկերը ջուրի կամ հայելիի մէջ երեւնալ :

Յուլ . արու եզ , որ դեռ լուծի տակ չէ մտած :

Փամփուլես , կաշիէ քսակ , ուռեցք :

Փարսիս . սխարաց հանգչելու տեղ :

Փող . ստակ , դրամ , արծաթ :

Փաղափակիրք . կրթեալ բարքով , ընկերասէր :

Քանդակ , քանդակել . կարծր նիւթի վրայ փորել , տաշել , գրել :

Քերթուած . բանաստեղծութիւն , ստանաւոր :


Քիմֆ . բերնին վերին կողմը :

Քուէարկուրիւն . ժողովի մէջ թղթով կամ նշանով իւր ընտրելին կամ իւր կարծիքն յայտնելու գործողութիւն :

Քսուրիւն . ուրիշին յանցանքը մատնել , խառնակիչութիւն :

Քրէիջ . բարձրաձայն ծիծաղիլ :

Օժակակել . օգնել , նպաստել :



ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Յառաջարան

ՄԱՍՆ Ա.

ԳԼՈՒԽ Ա. — ԸՆՏԱՆԻՔ 7

1. Հայր եւ մայր	7
2. Սէր որդիական	10
3. Երախտագիտութիւն	11
4. Մեծարանք	12
5. Հնազանդութիւն . — Հայրական իշխան.	13
6. Անձնուիրութիւն	17
7. Ազգականք	19
8. Որբ Համառօտութիւն	22
Հրահանգ	26

ԳԼՈՒԽ Բ. — ՎԱՐԺԱՐԱՆ 27

1. Վարժապետին դասերն	27
2. Սէր առ վարժապետն	29
3. Երախտագիտութիւն եւ մեծարանք	30
4. Հնազանդութիւն	33
5. Գասրնկերք	36
6. Ո՛չ երբէք քսութիւն	37
7. Մի՛ պատրուակ. մի կեղծաւորութիւն	38
8. Ոչ երբէք ստախօսու- թիւն	40
9. Աշխատութիւն	41
10. Նախանձաւորութիւն	43
11. Կարգապահութիւն դասարանին մէջ	45
Համառօտութիւն	46
Հրահանգ	47

ԳԼՈՒԽ Գ. — ՀԱՅՐԵՆԻՔ 49


1. Նախապաշարմունք եւ զիտութիւն	49
2. Սէր ազգին	53
3. Երկիրն	54
4. Յիշատակները մեծա- րել	55
5. Հայրենիքը չ՛քողուլ	56
6. Իւր երկրին բարգաւա- ճութիւնը կամենալ	61
7. Իւր երկրին փառքը կամենալ	62
8. Ազգային եղբայրու- թիւն	63
9. Հնազանդութիւն առ օրէնս կառավարու.	67
10. Հնազանդութիւն առ ազգային օրէնս	69
11. Ազգային տուրք	73
12. Պարտք քուեարկու- թեան	76
13. Ընկերակցութիւն Համառօտութիւն	79
Հրահանգ	85

ՄԱՍՆ Բ.

ԳԼՈՒԽ Ա. — ՊԱՐՏՔ ԱՌ ԱՆՁՆ 88

1. Մի՛ անբարեխառնու- թիւն	88
2. Մի՛ ծուլութիւն	90
3. Մի՛ հպարտութիւն. մի բարկութիւն	92

4. Պարտք առ անձն	94	7. Անձնուիրութիւն	109
Համառօտութիւն	96	8. Բարութիւն առ կեն-	
Հրահանգ	96	դանիս	110
ԳԼՈՒԽ Բ. — ՊԱՐՏՔ ԱՌ		Համառօտութիւն	112
ԱՅԼՍ	98	Հրահանգ	113
<i>Պարտք արդարութեան</i>	98	ԳԼՈՒԽ Գ. — ՊԱՐՏՔ ԱՌ	
1. Այլոց կեանքն յարգել	98	ԱՍՏՈՒԱԾ	115
2. Այլոց ազատութիւնն		1. Բնութիւնն	115
յարգել	100	2. Աստուած արարիչ	
3. Այլոց սեփականու-		տիեզերաց	118
թիւնն յարգել	103	3. Կրօնք	120
4. Այլոց պատիւն ու		4. Խիղճ	122
կարծիքն յարգել	104	5. Ճշմարիտն, բարին,	
<i>Պարտք գրութեան</i>	105	գեղեցիկն	124
5. Ողորմութիւն մարմ-		Համառօտութիւն	126
նոյ	105	Հրահանգ	126
6. Ողորմութիւն սրտի	107	Բառացուցակ	129



2013

